



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
9 - 39

19 NOV 2011

Կ.ԶԱՐԵԱՆ

ՕՐԵՐԻ
ԴՍՎԱԿԸ

Ա. ՏԵՐ-ԱՆԶԱԿԵԱՆ ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

891.99

9-39

Կ

ՕՐԵՐԻ

ՊԱԿԱՐ

1001
1383



1922

Տպագր. Ա. ՏԵՐ-ԱՆԶԱԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻԿ

ԵՐԳԱ

ուզում եմ լինի իմ երգս խոնարհ .
ինչպէս կտոր հաց սեղանի վերայ
աշխատաւորի .
ինչպէս համեստ հարս՝ ծաղկած նռենի՝
որ գարնան տենդով վառում է աշխարհ
ու լուռ տառապում տարփատենչ սէրով
գաղտնի վշտերով :

Ճառագալթի խաղ՝ արցունքի բոցում ,
լուսնոյ արծաթում
սու երների խորքին կամ ծայն հառաջող
սազի ելեւէջ
մնղեղիի մէջ —
ուզում եմ լինի իմ երգս թեւող :

Ինչպէս յերան զիծ պարզ եւ հոյակապ ,
ինչպէս աշնան ծառ մոռնջ եւ ոսկեթափ .
տիստը պանդոխտի ծանր ոտնարազ ,
կոտրած հացիի թառամած մի փայ
եւ ցորենների
լոիկ տառամառում .— ուզում եմ լինի :

Եւ թող պարզ սրտեր , այսուած խորհուրդի .
նոր հմացներով .
կանթեղ լոյսերով
կամ վիրաւորւած սիրոյ սուրէն
իմ երգս երգին :

Այն հոգիները՝ որ իմանում են
որոճող եղի թափշ աքերում
իմաստը խաղաղ և հասկանում են
հսկայ գաղտնիքը կանչող աստվերի-
պիտի հասկանան բամբռահար թեւիս
զարկը յանդգնող եւ իմ հոգիիս
որոնող թռիչքը ~~Ա~~սրտում խաւարի :

Աւգում եմ լինի իմ երգս խոնարհ
ինչպէս կտոր հաց սեղանի վերայ
աշխատաւորի
յնչպէս դարձիդարձ բոլորւող աշխարհ
յաւէրժ անծայրի ոսկեայ դաշտերում
կամ կոյլ անդընդում-
ուգում եմ լինի իմ երգս խոնարհ:

ԵՐԵԿՈՅ

Հորիկոնից վարդափերթ
իջան
մեղմատառան .
թերթ-թերթ ,
դժգոյն ծւէններ
լուռ սուրումներ
ծաղկաւէտ :

Լերան վերայ , կապտաւո՞ն
ցոլքեր , զոյներ սիւ եռուն
բոնկեցին
հթերային
շահեր—
ասհս հսկայ շուշաններ :

Ու լարեր մեղմ , շիկակարմիր ,
ծայն ծայնեցին թիթեռաթիռ .
ու եղաւ թաւ երաժշոտ թիւն ,
ու տրտմութիւն
սիրազըրաւ
եղաւ :

Հորիզոնում մի լալազար
յուսապատառ
մեռաւ :

Զանգակներ թառ . . .

Երեկոյ:

ԱՉՔԵՐ ԿԱՆ...

Աչքեր կան՝ դալար դաշտ անդորր
ուր մի միտք, մի երազ ոսկեհիւս
թեւում է երկնասոյզ:

Ու աղուոր
աչքեր կան աղամանդ—
լուսեղ բանտ՝
ուր հոգիս արեւ է ըմպում
ու հարբում:

Նայի՛ր ինձ, աշխա՛րհ ևս բիւրեղ.
հա՛ց ևս վառօրէն համեղ,
ո՛ կանթեղ— յուսասու պարզեւ
ոսկեթեւ :

Աչքեր կան ընդծովեայ խորհուրդում սուզւած
տրիտոնի ջութակով երգւած,
կախարդւած զաղտազող լոյսով—
ծովերը արծաթող ասողով:

Աչքեր կան՝
մունզ նարգէս հիալառ այգի

լիալոյս մի յոյս կոյսի:
Աքեր կան՝ ծիածան շուշան:

Նայի՛ր ինձ եւ եղիր հրեղէն .
համբուս վրայ ոլորւած
առասպե՛լ կարմրավարս եղիր
ու սանդուխ ոսկեղէն
լեռից լիս կարկառւած :

Ա Ր Ա Խ Օ Տ

Մերկ ոտքերիս տակ , առաւօտ
մարմարին է պաղ :
Թրթռուեն մարմնիս մէջ
զովը ընկլիմած
համբովը է խաղաղ :
Ժա՛մ արեւ լաքաղ —
առաւօտ

ԽՈԿՈՒՄ

Երեխոն մեղմ եւ մելանուշ իւ այնքան լուս .
Երգիս տաւզին սրտակտուք
մի գաղտնազող
հետք է թորում սրսըմադող :

Եւ անծայրն եմ կարծես լուս .
Իւ իմանում եւ հասկանում
մի հոգեմաշ մնաժամի ծայնը թրթուն
որ հեծում է , զիշեր ցերեկ , անբռն անբռն . . .

Նառերի մէջ
մի ելեւէջ,
բաղցրակարկաչ ու յորդառատ՝
նւազ է իջում անհունապատ .
ու ծայները , վերջալոյսի ոսկիներով
զոթակացած ,
հոգուս խորում աչք են բայցում զմայլացած ;
Թեւեր ճերմակ , —
Եոյս կուսական եւ ճերարծակ

Ժամ ներդաշնակ . . .
Մնդուս վարսեր ու վարդաբոյք
բաց շրթունքներ բազմահրապոյք —
օ երկնային անտես իմ քոյք :

Երեկոն մեղմ եւ մելանուշ եւ այնքան լուս .
մեռաւ ահա ցողերի հետ նրբափիսուր :
Մեռաւ .
Եւ երզը թաւ .
ծառերի մէջ
հիմա մոայլ , անեկեւէջ :

Եւ ամէն ինչ սպասեց . . .

ԿԵԱՆՔԻՍ ՎԱՐԴԸ

Եօթ վիերթերով, եօթնասուտակ
կեանքիս նանիր
մատնին՝ կախարդ ոսկենքրագ՝
տարօրինակ վարդ է կարմիր:

Մէկ սուտար ծիծաղ է պաղ.
միւս սուտակը զոհ է մատաղ,
մէկը գէրը է խօլափաղակ,
մէկը կանչ է սոսկանւագ.
մէկը վիշտ է բոցակիզուած.
մէկը մայր է սիրոր պատռած
և մէկն էլ աչք եւ արտ սսոր—
միծող մահ է տրտմասուզ:

Եօթ վիերթերով, եօթնասուտ սկ,
կեանքիս վարդը տիսրազուշակ
ևս վիեթեցի
վառ ժամերին բոցափափար
եւ նետեցի
անջրպետի ոռնող կանչին,
անմահութեան արբշիո հետքին

եւ եղկ ոյժին լաժուարդ լուսնի՝
որ դագաղս պիտի հասնի:

Եւ ձեւերը անմիտ կեանքիս.
կայլակները խուլ ծիծաղիս
թաւալ թաւալ զրորուեցան
անդունդներում սոսկատառան:

Եօթ վիերթերով, եօթնասուտակ
վարդից մի՛ վիերթ մնաց միակ:
Աչքը աչքիս, սիրոր սրտիս,
իր ահուելի վայլը ճակուիս,
հրաշորթ մահը ինծ է նայում
և մոգավառ խօսքեր ասում:

Եօթ վիերթերով, եօթնասուտակ,
կեանքիս նանիր
մատնին՝ կախարդ ոսկենքրագ՝
տարօրինակ վարդ է կարմիր:

ԱՆԲԻՒՐԸ

Խոհերս այսօր՝ *Թ-Դ-Հ. Խոնդիք*
 սպառն հովի
 անշըռնջ օրօր *ՃՎՀ*
 դաշտերում բխրեղ՝ խաղ են յուշերի:
 Եռուն, կաթողին,
 տենդ են հոգեծին
 ու փունջ փունջ քաղւած հեռաւոր մրմունջ
 և հրաշուրթ սուր շունչ:

Խոհերս այսօր
 մի ցաւ են աղւոր —
 կրազի գոլգոտն մեղմազանդ տրտունջ:

Եյտեղ, հեռւում, լերան վերայ ձիւնապրսակ
 լոյսերի մէջ, բիւրեղաթագ,
 արեւնաթոր
 կայլակնօրօր,
 աղբիւրը զինջ ու մննաւոր
 յաւերժութեան ժպտում է լուս
 ու ծաճանչներ ըմպում մաքոր:
 Նա հողերի սրտից բըխած
 թաքնաթաքուր խօսք է առած, —
 կոոր արեւ մշտակարկաչ,
 վնիտ հառաջ:

Եղեւնիներ, այնտեղ հեռւում,
 կածանների սիրտն են տաւզում
 արտօսրագառ
 գողդողալար
 սիրերգերով
 եւ ծայներով
 տարօրինակ
 այնքա՞ն մինակ-
 նման սրտիս այնքա՞ն մինակ:

Իսկ ժայռերից հոսում է ցած՝ հինցած արծաթ

սատափնակաթ՝
ծայրը լեռան
եւ հոտերի բոժոժների հետը երգու
մարզի վերայ—
ուր իմ հոգիս պարզուած լոյս է եւ շամիւղայ:

եւ գետը լուռ երգը այս կոյս
քաշը ում է ուղեկորոյս
պուրակներից
ու դաշտերից
կապոյտը տմոյն երկինքների ըմպելով
ի՞ն նոր ու վառ հայիներով:

Սինտեղ հեռւում, աղբիւրը ջինջ,
ուկեկալակ պաղ աղամանդ՝
մի քիչ է և խանդ արեւաքանդ,
լեռան զլսին, աղբիւրը ջինջ
պայծառափայլ, լուսած աղիկ,
մնիկ-մնիկ.
արցունքներ է ժողովում
կարկաչում, կարկաչում . . .

1383

ՊԱՐՈՒՀՈՒՆ

Պարդ դաշնայորդ, կաքաւդ ճըկուն.
կարապի վիզդ, զիստդ երերուն.
տաւզուն կշռոյթը հեզ
քո ծալ ծալ ծալող ծեւերիդ բեհեզ՝
երգ են սիրակէզ վիհերում մանուած,
ուր ժամանակին, լոյս դրախտից վտարուած
քեզ հետ, սիրազին, այնքան ենք լացած:



ԺԱՄԵՐԻ ՔԱՅԼԸ

Լերան ետեւ ծնծղաները Ա.ԲՇԱ.Ա.ՈՅՑՄ
լուսատափ ծայնեցին

ու Ա.Ա.Խ.ՕՏ

եղաւ դաշտում ոսկէալիք ցորենների
ուր լալազար ու մարեմխոտ
ճամանժափունջ կառուեցին:

Բլուրից ի բլուր արփիաթոր ադամանդներ
եղան հեղուկ ապառաժներ

ու Կ.Ա. ՕՒ

եղաւ աղուոր—
մարմանդ օղից բոյր ըմպող օր
եղաւ նոր
ու նստեցի լուռ
լուռթեան մէջ նոր:

ԵՐԵԿՈՅՑԻ

պատմու ճանի հետ թրթընեց
սողսող այլւեց

դաշտը լուսեղ Յնոտյ ձորը յետոյ լեռը
յետոյ նորից դաշտը լուսեղ
ու անտառը հազարկանթեղ
սպասում է, սպասում—
ու՞մ—
մինչ ես լիոյ եմ մազցում:

Այստեղ բարձրում, լերան գլխին,
գլուխս դրած մի գիսաւոր աստղի սրտին
զիշե՛րը, լսում եմ զիշերը
և աստղերի դաշտում դալար
վնասում ճամբան, ճամբան հիավառ
իմ նոր, իմ վեհ աստուածութեան,
իմ լուսաստե՛ղծ լինելութեան:

ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Սեւ է հացը սեղանի վրայ
օրերի:

Ու ժամերը օծապսակ
մեր բախտի,

կաքաւում են, խօլ եւ անյազ
այն աւերակ, խոպան հանդում
որուն մարդիկ կեանք են ասում:

Անդունդաշէջ,
ինչպէս աղբիւր հեծող մենակ ծորերի մէջ
տրտում սիրտս, յուզումների ժայռից ի ժայռ
հեղաքարքառ,
վագր է ընկնում հառաջելով
ու գնում է, գնում, մելամաղձի ծորերի մէջ
հառաջելով:

Ու տանջում է տրտըմօրօր լուռթեան հնատ
աշունի
որ յոյս չունի—
աշունի
որ դառնում է ինչպէս գունատ դեղձանամազ
աներազ
շոբքը վիճի:
Սեւ է հացը սեղանի վրայ օրերի,

* * *

Ժայռերի մօտ
ծովին է տրորւում ու ոռնում:

Այս առաւօտ
սուր հովերի հօտը սլսլուն
փրիտուրի մէջ կոհակների արածեց
ու սրնգախումբ հովիւները եղերական
անցան:

Հեռուում մի նաև տեհնդացնոր հեռականչեց
ու բնկղմեց

Ծովադաշտում սարսափահար խարշափեցին
արիտոնների սպիտակ, հեղուկ տօսախները:

Զայներ լացին:

Ու մըրիկը ծիծաղեց:

Այս առաւօտ
ժայռերի մօտ
սիրտս ճաթեց:

ՎԵՐԱՑՈՒՄ

Երկինքներից, տաշտ-տաշտ աստղեր թափեցին:
Խորհուրդածին
ու մոգավառ գիշեր եղաւ,
թաւուս, սազարթ պուրակներում,
անհունապատ, լիոնաշղթայ բարձունքներում:

Շողակ ու բուստ ու մնողեսիկ,
երկինքներից՝ ծխածան հրարան՝
օդում մաղմիկ
կայծկունեցին ու անցան,
Ու ծիս հրաշուրթ, թափաճարեց
զլուխը խննէց, սապատակեց
լիոնից ի վեր
կածաններով անդնդաստուեր:

Ու ծիս հրաշուրթ ասպատակեց
զիշերուայ ու կուրծքը ճեղքեց
կատաղօրէն վըրնչալով
ու խաղալով ու ցատկելով:

Լեռան պլսին, իմ ծին և ես,

աստուծոյ պէս,
կանգ ենք առել և դաշտի մէջ լայնատարած
անհունացած,
խորն ենք նայում խաւարների՝
պլլաւած շուրջը քաղաքների:

Իմ ծին և ես՝ աստուծոյ պէս՝
տաշտ-տաշտ սաստղ ենք նետում դաշտին,
պարտէզներին,
ու հեռանում, առանձնանում, աննիթանում
անձայրութեան ոսկիրանդակ ոստաններում:

Ո՛ ծիս հրեղէն,
զմրուխտակոյտ մնծ լիոներով անհունների
լուսականթեղ տիեզերքի
անվերջ ճամբով սատափաշէն,
սապատակիր նորէն, նորէ՞ն,
ու լինենք լո՛յս՝ տաշտ-տաշտ թափւած
լութեան մէջ երաժշտացած:

ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆ

Տեսլապաշտ դաշտ։ Հորիզոն՝
կարմրավարդ զարդ։
Հեռուն՝ բռնկած տօպագէօն։

Արդ—
միերթ-միերթ հողիս վայր է ընկնուա
և այբուում,
ծռած լերան բաց արգանդի—
և այբուում—
կարմիր դաշտի նոր բոյսերի .
հրդեհուա.

Արդ—
խոհեր սողուն և ոլորուն,
օձանման և պայպաջուն,
մի ահուելի—
հեծող մահն է ճրագների —
մի պատուող—
սիրոն և լափուամ արեւների—
մի սոսկազող—

ասես զայլի դիակ կրծող—
մի զազրելի
սեւ զազտնիքի
ասում են սին մեղեդին։

Եւ ես ահա՛ բամբիո ճաթած։
Եւ եւ ահա
ինչպէս սպաննուած մի բահանալ .
ինչպէս լիճում մի գորտ սառած .
ինչպէս թռչուն զլուխը պատուած։

Եւ ես ահա—
հազած զիշելր .
հազած ամպած ամայութիւն , .
սեզամուկի մարտած աչքեր,
տարածութեան կոյր լուռթիւն։
Ես եմ ահա՝ միայնութիւն։

Փերթ վերթ հողիս վայր է ընկնուա . . .

Ես եմ ահա միայնութիւն։

Մի որդ աւազներն է շարժուամ
անապատուամ . . .
Ես եմ ահա՝ մինութիւն։

Օ լինի, լինի', թող լինի
լուռթիւն և միայնութիւն՝
պարտէզներուամ, դաշտերուամ, լեռներուամ—
թող լինի . . .

ՄԱՐԴԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ

Տուների շուրջերում խորտակւած մարդիկ —
խորտակւած քաղաքի սեւ ծովում տառան —
անկենդան,
մահախոց ու անբոց,
անարեւ, անպարզեւ
նախածքներ ունեն
ու հիւանդ ժըսիսներ մարդիկ
ունեն:

Ամբոխը՝ սէր ու ոխ — տիսոր
քայլերով — ներքնահուր
ապրում է, գարծիդարձ շարժւում
սէր ու ոխ փոխն ի փոխ հիւսում:

Ու նախախնամական կայ մի բան,
եւ անիմացական,
այնքան սրտասուայտ, հոգեմաշ
քայլերում քաշքաշ
փողոցում ցելսերի՝ արդ ու զարդ
մանող, մանող հիւսք մի բարդ:

Միաձև, միաշարժ, միանուազ
ապրում են ու երգում մարդիկ.
մինակրակ այլուում
սրտերի վիճում
ու սպասում օրերի հուրը,
օրերի սուրը,
սղոցը ու զարկը մրճահար —
մարդիկ, մարդիկ, անդադար:

Նայում է լուսանցքից սատանան կարմիր
առնելին անխատիք,
շիկաներ օրիորդի զիստերը բարակ
սողոսկող ծերուկի քայլերը դողդող
բանւօրի բաց կուրծքը փողփող,
պունիկի լանջքերը ծաղկափակ
նայում է սատանան,
ծիծաղում սարսափի ծիծաղուլ
քայլաբում դժոխածով
սատանան:

Ու հազար գաների առջևուը կանգնած
սոտերներ
թանձրացած —
ծերքերնին զերանդի բռնած —
լայն, խոժոռ նախածքով ծամում են մի միտք
մի սեւ միտք
ու զիշերը բախում են կամաց
զոներին
ու խօսքեր են ասում շատ ցած,
պատզամներ են տալիս շատ ցած
ամենին, ամենին:

ԱՆՕԹՔ

Զիւնի վրայ սպիտակ, սպիտակ
մի աղանի նստեց սպիտակ, սպիտակ:
Եւ թեւերով վիրաւորուած
սառած

Նա զարնում էր ձիւնը սաւանացած՝
որպէսզի տաք լինի թեւին
որպէսզի, տաք լինի մարմինիկին:

Բայց ձիւնը տաք չտուաւ.
աչքերը սառած
աղանին մնուաւ:

Զիւնի վրայ սպիտակ, սպիտակ,
գթատու Սատուած,
դիակը սառած
իր բաց թեւերով դէպի քեզ անկած
ի՞նչ է աղերսում դիակը սառած,

Լոի՛ր մեզ Ասուուած :

* *

Երկաթ սիրոը ժամացոյցի
բաբախում է ամեն ժամին,
կծկոտոցով չորցած կմախքի
մահ է ոռնում անհուններին:

Քոյրի՛կ, լարի՛ր մեքենական
լուռ սոխակը, թող դայլայլի,
եղբ ժամը նոր պիտի մեռնի:

Քոյրիկ, լարի՛ր մեքենական
լուռ սոխակը, թող կեա՞նք լինի . . .

Ո՞վ պիտի գայ . . . պէտք է սպասել
կեանքի բեռը պէտք է տանել . . .
Ո՞վ պիտի գայ, ո՞վ պիտի գայ . . .

Մետաղ ծայնը զանգակների
ճախը է հեծող հողիների:

* *

Հողիս մագնիսացած հիւսիս է մազլցում . . .

Հեռւում

սպիտակ զօղանջը զանգակների—
բաց թեւեր կախարդ թռչունների—
հնառմ է դիւթացած լուռ անհունին,
պայծառ օդին :

Երեկոյի

մարմարների մէջ պաղպաջուն,
տենդացնոր ընկղմեցի
վառ թեւերս
ու սեւեռոն
պարզեց՛
մարտող, սուտակ լոյսերին:

Հողիս մագնիսացած հիւսիս է մազլցում . . .

Պաղ ճակատս կռթնեցի
սպակին, երազեցի . . .

ՎԱՅՐԿԵԱՆ

Մելամաղծոտ միայնութիւն . . .
Լուռ կսկիծ՝
հեռւից նայող անդունդներից :

Անհզրութիւն:

Կծկլտում է հովը միայնակ
տանս շորջը արևւաթագ
ու ծւծըւում մի ճնճըզուկ . . .
«պիտ' լինի հով, պիտ' լինի բուք . . .»

ԿՈՅՐ ՕՐԻՈՐԴԸ

Մոայլ այս միզում,
անձանօթը թեւն է շարժում
հեռուների,
մեղմասլաց, խոր երազի՝
մութ աշխարհում:

Թախծի յուշեր —
զիսապտոյտ թոյն բուրումներ —
ասում են ինձ՝
ձայնով խորհուրդ, ձայնով պղինձ՝
անշախտ խօսքեր:

Մոայլ այս միզում՝
զրանս մօտ մէկն է անցնում. —
տիսրադալուկ
եւ աննշմար եւ անշըշուկ
մէկն է անցնում:

Ինչպէս տիսուք
հիծկլտում է մի դաշնամոք

հարեւանի

տժգունադէմ, կոյք օրիորդի
ձեռքի տակ հուր:

Մոալ այս միզում,
մելամաղձի այս սեւ ժամում,
անյայտ սուզի
երգը ահեղ, լացը ցաւի,
ով է ասում...:

ՍՈՒԳ

Կանչ-վայում՝ որտերում սուզ հազած կանանց:

Լարը մնուելոցի՝ անանց լաց՝
կամաց-կամաց,
սուզերգումով սրսըփոն,
ինչեց սովո՞ն:

Ո՞ ճեկեկում, ո՞ ճեկեկում...
կսկծացաւ ափսոսում՝
եւ ճիշեր ողբերզական
նոցա համար որ մնուան,
եւ զիշերներ անքուն, անքուն —
յուշերի ջինջ եւ արւան:

Հրկիզաբոց արցունք
յուռութուլունք,
առաւօտ աղօթք
ու ստոերներին՝ մղծաւանզի շոյեր
պաղատումներ:

Առւզ հազած մայրեր մահերի,
մայում են ողբեր որբերի
և հառաջում են բառաչ լացը զառնուկի
մինակութեան մէջ վշտի:

Ապակիացած աչքերով,
օրերով, օրերով,
շէմին առջեւ սպասում են
սպասում են, սպասում են —
մաշւելով, հեծկլուալով,
մատերը կոտրտելով:

Կանչ-վայում սրտերում սուզ հազած կանանց...

Երթներնին ջերմոտ, բորբոքած,
դէմքերնին թառամած,
սրտի տեղ վշտերից խածնուած,
մի կտոր միս, մեռած, արխնած
եւ լաց, եւ լաց...

Կանչ-վայում սրտերում սուզ հազած կանանց —
մեռելոց անանց....

ECCE HOMO

Միայնութեան մէջ աղեկէզ
ես
փշեայ պասկ եմ հիւսում
ու սպասում:

Ասում եմ ինձ ես,
տե՛ս, լոյսերդ մեռած — տե՛ս :

Ծամածիու ծիծաղ, խնդբունդ հեկեկանք,
ջահերի խօլ խաղ... Հոգիս սիւ մի վանք
եւ սէլս սեղան
զսհարերականէ:
Մի տարօրինակ պատկեր անկենդան՝
որ ինձ է նայում, խօսում է որ ինձ...

Ե՞ս եմ, նայում եմ աչքերով պղինձ:

Ես՝ զոհ եւ զոհարերող,
ես՝ սոր եւ սորը սրբող —
ալդպէս եմ, այդպէս եմ...

Ահա ամքոխը բարկոծող, պղծող.

վրփուր ծիծաղող

սփռում է մի ծող՝

և ալեկոծում. . .

Լոցող աչքերից արին է կաթում:

Հեռում՝ դաշտ ու լեռ և մի ճանապարհ
հեռանկարում ժապահնացած.

Խոպան ու կոպճուտ, մի լերկ ճանապարհ
ուրուականացած :

Ես—խաչելոթիւն :

Իրենց ծեռքերը թող պիղասոսներ,

սուս խմասոոթիւն

ցկնող ուզեղներ.

մարած հողիներ սալսրսած մահով—
իրենց ծեռքերը թող լուա՞ն շուսով:

Ես—խաչելոթիւն

և միայնութիւն

և ցաւ և տապանիք,

ողբ և հեկեկանք

և մ. . .

Ես—դիակ պաղ

անդագաղ,

արին, հաց, հողի,

մեղմւն մեղեղի տիեզերքի

և մ. . .

Ես—խաչելոթիւն.

և խաչի վրայից երկինքն եմ փնտում

և ի՞նձ եմ սպասում. . .

Գիշեր:

Այն ո՞վ է լալիս, . . . Մարիամ, Մարիամ. . .

Գիշեր:

նա —
մեծ անտառից:

Զիւնի վրայ
ոչ մի քայլ կայ:

Լուս ու ցուբու
օրն է մուզտ
և անարատ
անապատ :

Երբ պիտի գայ
նա...:

ԶՄԵՐ

Սաւանացած դաշտերում .
փետրաթափում :

Ճերմակ
նուազ,
հող-հող ծուխներ,
թաւ զանգալիներ,
արձաթ ծայնի
արձագանգներ
անապատում ամայի:

Գեղ ու ահեղ մինակոթիւն,
բոյր լոռոթիւն,
բարկ մտածում
և սպասում...

Մի ազուտ
թռառ :

Մեծ անտառից
Երբ պիտի գայ

ՏՕԹ ՇՈՒԽՉԸ ՀՈՎԼԻ...

Տօթ շունչը հովի,
անապատի
սուազ է վառում
տժգոյն վարդերի
բաժակներում:

Տօթ շունչը հովի,
թառից է սրիսում
յոզնած ծառերի,
թօշնած բոյսերի
փերթերի վիրայ

ու սրտիս վերայ:

Ո՞վ զիտէ այնտեղ,
անապատներում,
սոսկալի, ահեղ
ինչ դէպք է անցնում . . .

Ինչպիսի եղան

հառաջն է լալիս
և սրսրիալով
ըսր երկրագունդի
ծաւալ դագաղում,
ինչ մութ մեղեղի,
հեծկլտանքներով
հովի շրթերում
իր սուզն է լալիս:

Յով շունչը հովի
մի շղարշ է յուի,
ծանր ու խողդող
եւ թալկացնուլ . . .

Ո՞վ զիտէ այնտեղ,
անապատներում,
սոսկալի, ահեղ
ինչ դէպք է անցնում . . .

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

Աղօթեցէ՛ք մեզի համար մարտիրոսներ,
այնպէս լնչպէս ծեզ գծեցին
անյայտ ծեռքեր
մազազաթի թօշնած կողքին.
նշանման մեծ աչքերով,
կարմիր քղամիդ
լայն ծալքերով
եւ գոտիով զարդ ի զարդ՝
ուր մեղեսիկ, ուր սուտակ
փառ են տժգոյն բոցերով:

Աղօթեցէ՛ք մեզի համար սրբութիներ —
ինչպէս տեսան ծեզ վարպետներ,
վանքի խուցի ստուերներում
կամ երազում.
մարմիններով անհետացած,
աչքեր սառած,
ծեռքեր նիհար,
տխուր նայուածք անմխթար:

Աղօթեցէ՛ք մեզի համար թագաւորներ,
արևելքի երեք մողեր՝
որ մանուկի առջեւ չոքած
լուռ, հիացած,
ուկեզմբուխտ փիլոնների տակը կորած,
խունկ էք վառում
եւ աղօթում:

Աղօթեցէ՛ք մեզի համար սուրբ հրեշտակներ,
բերութիներ,
որ կիսածուկ մարդերի հետ,
տարօրինակ ծաղիկների,
թուշունների
եւ զոյնզգոյն մեծ տառերի
խումբում յաւէտ
թեւարկում էք խնկաւէտ:
եւ յայտնութեան փողն էք փչում
ուկի կորած դաշտերում:

Աղօթեցէ՛ք մեզի համար եւ դուք սուրբեր,
ուկեզմբան պատկերներ:
Ոնյատի մէջ անյայութեան
բիւզանդական ծեւերով,
դուք զնում էք, անհունութեան
լոյս ապազան պատմերով:

Եւ դուք կիներ, խաչի տակը սարսուացող,
մայրեր լացոլ,
պարզ զիծերով նկարուած,
զլուխնիդ ծռած

եւ գառնուկի նայուածքով,
նիհար, նիհար թուշերով—
աղօթեցէ՛ք մեզի համար:

Մագաղաթի հեռ անկար,
երազ աշխարհ,
ուր բոցավառ մի նունուֆար,
խօլ, տեսլային, անկարելի,
լոյս է ծորում անյաղթելի,
ուր անուրջի ծուռ բոցսերը,
խորհրդաւոր ոիր գիծերը
ներքնախորը կարմիր տառի
լոյս են թորում շուրջը բառի—
մագաղաթի հեռ անկար,
գիծեր, գոյներ
և եօթնանկիւն դոք մեծ աստղեր
աղօթեցէ՛ք մեզի համար:

ՊԱՆԴՈՒԽՏ

Ես պանդուխտ եմ բանդագուշուած
ճամբաներում խաչածեւուած,
բախս սրտերում անտառների
հերկուած կուրծքում ակօսների:

Ես պանդուխտ եմ խօլ ցաւերի,
միսը կըծող,
անասելի,
գայլի պողպատ ակռաների
խայթով ալուող
տանջանքների:

Ծարաւ հոգիս ունի մի քոյր
նա էլ ինձ հետ ուղեւոր է,
նա էլ հինուց սգաւոր է.
ծարաւ հոգիս ունի մի քոյր:
Անունն է իր Սուրբ Խենդութիւն,
իմ խոհերիս խաջում խաջուած,
և հովերի ողբով սառած՝
բախտիս ճրագով

եւ աչքերիս հիր լրյաերով
հրդեհացած:

Անունն է իր Սուրբ Խենդոթիւն:

Սիրտս ունի մի մռայլ եղբայր .
անունն է իր Անօթոթիւն:
Պատուած , աղտոտ
ըթունիքներով
և հիւանդոտ,
սատկող շունի մութ աչքերով,
նիհար , նիհար ծեռքերով :

Անունն է իր Անօթոթիւն:

Ես պանդուխտ եմ բանդագուշուած
ճամբաներում խաչածեւուած
ուր սողում են ծնոս ընկած
ոխտաւորներ սարսափալաց:

Ոճիրը լուռ . տժգունադէմ
քշում է ստուերն իր երազի ,
ածում է սազը մեռելերզի
և ծամում է
սառ արիւնը ծաղիկների ,
Պոռնիկը մռայլ եւ սիրադէմ ,
նոր օլնգուրուած
և վէրքերով բիւր զարդարուած:

Հով եւ անձրեւ եւ փոթորիկ :

Արտակտուր սուր ջութակներ .
սարսափ պարով ուխտաւորներ .
հով եւ անձրեւ եւ փոթորիկ
որոտում են բամբ համերզներ
երզեհենով մահանրաւէր ,
ճամբաներում մռայլ վշտարեր:

Ես պանդուխտ եմ բանդագուշուած ,
բաղդի պողպատ դաշոյններով ,
յոյսի երազ հմայքներով
ընդմիշտ , ընդմիշտ վիրաւորուած :

Ես պանդուխտ եմ բանդագուշուած
ճամբաներում խաչածեւած ,
բախ սրտերում անտառների
հերթած կուրծքում ակօսների:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Ոհան խոնիքիս մայր եկեղեցին
վառուած ջահներով խօլ տեսիլքներիս,
ուր ողբ է լալիս
խոնարհ ու դժբաղդ մի Աստուածածին:

Այնտեղ եղերգի ես վեճ վարդապետ.
ես պատարազիչ նոր խորհուրդների,
սաղմոս եմ ասում ասուպների հետ,
ծնծղայ եմ շարժում խայթող ցաւերի
և խաչուած մարդի հոսուն արիւնից,
սպաննուած մարմինից,
ոսկեզարդ սկիհում իմ տաղերգութեան,
մասունք եմ վառում հեծող տրտմութեան:

Յաճախ ծայների վարդեր են բացւում —
բիւրեղ ու լուսեղ
հազարականթեղ —
վեհ կամարների լայն զիծերի տակ
եւ օրհներգում են, եւ տաղ են ասում
վառելով յոյսի մողական շամփրակ:

Յաճախ լացերի հեղեղն է շառաչ
որ սրտակոտը
սուր վայու մներով, ինչպէս մղձաւ անջ,
զալիս է ծածկում աղօթքս տխուր:
Կամ լութեան մլչ հոգիս է ողբում՝
մնեսու որ, գժրաղդ, Անգանի առջեւ
զանարերական հոգիս է տու պատում՝
կենաց սեւ զրբի խօսքերից անթեւ:

Գիշերն է զալիս: Նոր դազաղների,
մեռած յոյսերի,
շարքերն են շարուում բարերի վերայ,
Մութերի խորրից մի խօլ արեղաւ,
ծեռըի մլչ բռնած իմ սիրոս պատուած,
անեղ ծեւերով,
սուկաղի տեսորով,
սովոն ինչպէս օծ,
ասում է լալով մի սեւ մեռելոց:

Եւ կանչում է ինձ
իր ծայնով սրինձ,
սեւ պատարազի այդ հրէշ արեղան,
հմ մնեսութիւնը լափող արեղան:

Օտոս սանդուղներով մներ բարձրանում ենք
մի զանգակատան
բարձր կատար՝ աղաղակում ենք
դէպի լուսերը,
դէպի աստղերը,
անհունին խռապան,
ալրւող զօղանցի հրդեհ նետելով,
պատուած սրտերի արին թորիով:

Ո՞չ մի պատասխան։ Լուռը է Աստուած,
լուռը է կրկինք ոսկիով ցանուած,
լուռը է բնութիւն։

Ահա՛ մենութիւն . . .

Ահձայնութեան մէջ եկեղեցիիս
լուռը է միայն կոփինը սրտիս .
պատուած իմ սրտիս։

Էսէ՛ր, ո՛ մարդեր ։ Ահա՛ մենութիւն։

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Դալար դաշտերը մեր հայրենիքի
մեղեղի ունին
մելամաղձութեան, տառապանքների.
ու սրազիագոլ
ու կողկողազնին
ունին սուզերզում ողեղը խայթող։

Լեռները մեր լուռ, սառած, ալևոր .
անդունդ խոնիքի զալտնիքնեց ունին
և յիշատակներ
ողբերգութիւններ .
ծալ ծալ ժողոված, այնքան ահաւոր։

Մեր աղբիւրները աղամանդավառ . —
ճառագայթաթոր կարկաչոն արեւ —
վշտի անհամար
ձայներով լեցուած,
երգեր են տանում, երգեր վայրապար
մեր հառաջնիքի շեշտով դաշնակտած։

Եի ժանոս զալտնիք կալ հեռանկարի

ալեծու զ զի որոր մներում
եւ թարսուած մի մտոր երիներանգ լուսի
արինուշտ ողբի կայծակ ոստերում:

Այսուել տանջանիքներ,
յու սահմատ մներ
առ ականերով սրտեր կրծեցին.
այսուել
յուսի տեղ
սուկումի օձեր
նենցու սատերով պարիր բռնեցին.
այսուել դժոխիք սեւ փողը նեցից –
սեւ փողը ոճիր սանացող կանչի.
պատուած միսերի ծնծղանը ծայնեց:
Այսուել սողացին ստուերները մանի:

Եր հայրենիքը — անսելի երկիր —
աղքատ ու վերքու,
դժբախտ ու բորու,
սակայն այնպիսի — հրաշքների երկիր —
մի զարմանանրաշ, վեճ հոգի ունի.
սորբերին յատուեկ այնպիսի եռանդ,
ու հզօրի միրտ աղամանդ քանդ,
որ ոչ մէկ Քրիստոս կարող է անցնել
խոպան գաշտերից
ու սառ լիոներից,
առանց որ ասի. Պէտք է աղօթել,
ա'յս է երկիրը մեծ տանջանիքների.
երազ քանդակող ապազայ կրօների
և առտուածաշունչ խոլ մարտիկների:

ՏԵՍԻԼՔՆԵՐԻ ՕՐԻՈՐԴԸ

E quella di cui ancor
piangendo canto...
Petrarca. Trionfo del-
la divinità.

I.

Այսօր տեսաց, օրիորդն իմ փողիողենէջ
արտի պատից ոսկելէն,
ճիր, լուսավառ
մի լալազար
բաղեց, զնաց յուլորէն:

Սաղապաճեմ իր բայլերից
նոր ծաղիկներ բարձրացան
եւ լուսուոգ իր ծեռքերից
բոցեր իշան ոսկեման:

Օրիորդն իմ, շամփուչ ձայնով, բացասահւու,
մեղեղնազեղ երգերի՝
ճախրը պարզեց տարիալի
ու, բըռնկած, նողինասարսուռ բղամիդով՝
արտը դարձրեց վոթորկալից բեհեղ ծով:

Օրիորդն իմ, երազների թեւ մաքոր,
խորհուրդների դաշն հուր,
սոսուերներ ափոեց երկնալուր
եւ նեղասան, մեղմ նեմով, պեղնապաճոյն.

արտիաշուք ձեւերով .
արտօր ջանեց ,
արտօր վառեց
գոմարներով , զոհարներով :

Այսօր տեսալ օրիորդն իմ փառփողենէջ
անորջների արտի մէջ :

2.

Օ վառ երազ , պահի՛ր լոյսդ անյեղի :

Հոգիների թաքնաժաքուր բանալի ,
հեղեղ սիրոյ արխւնազարդ օրերում
և ձայն ողբի միայնակ զորուող վիճերում ,
անորջաթիւ պարմանուի ,
տեսիր ներկայ և սիրալի ,
պաւատապերն եւ փափկարայ ,
և որոնորդափայլ —

Օ իմ օրիորդ՝ պահի՛ր լոյսդ անյեղի :

Դու հաց լուսեղ —
համե՞զ , համե՞զ ,
դու շատ ժաքուր
փողփող ազրիւր ,
դու տենդերի ջահուն նաժիշտա ,
անհունների նորք երաժիշտ ,
դու համասփեւու
ժարդի փերթեր ցանող զեփիու ,

դու ոսկի խօսք աբրուով սրտի .
դու ճամանեներ վունջ վունջ կտրող զերանոյի .
Օ վառ երազ , պահի՛ր լոյսդ անյեղի :

3.

Վերացումով դեղիւուն և ճոգհանանց
սահման է թուիչը դէպի քիզ
բայց հողմոսը՝ խաւարի շոնէ անհանանչ
մարում են տեսնուս աղեկէզ :

Ուղին մթին
օծապտոյս՝ միայնակ ու սին
երկինքների խորերում
կողը նայուածքով . մեզ է նայում .

Ուղին մթին
անկումների , պատրահների
դժբաղդոթեանց , սիւ վշտերի
ուղին մթին .

Այս ժամը նոր , ժամը տիսուր
սուրի պէս սուր .
մզձաւանջի ցաւ է մահում

զիշեր ճազած ճամբաներու ժ
եւ վէրքերի սուտակներից
ու սուզերի նեկեկաներից
հողմոսի սոս փիտուրներով .

մըրկարեր բամբ ծայներով .
ալս ժամբ նոր՝ շղարշ է հիւսում
անդունդներում ;
Ո՞ իւ տեսիլր , անհուն կրակով ջահաւորուած
և երազով կենդանի .
աչքերիս մէջ , սպիտակ լոյսդ կանթեղացած
թո՞ղ աղաւանդ
արցունք լինի ,
ու վանեայ բանտ
պատրանքների
թո՞ղ լինի .

4.

Կէս զիշեր է : Սկնեակիս մէջ սողոն սոսուերներ
բռոթիւններ ,
մոթերի հնու մեղմատառան
ու անկենդան ,
կոյք եւ ախուրօձերի պէս
տի՞ս , տես —
ման են գաւիս կամաց , անլուր ,
ու սրտիս փրայ սրտում մի սոր :

Հեծլլսանի:

Գիտեմ , զիտեմ , խաւարների մռաց խորհուրդի
հոկայ լուծը անտանելի՝
պիտի մարի , պիտի մարի
ճեկեկող առկայծումը բո կանթեղի:

Եթ ոլք :

Սենեակիս մէջ , ճրազը յոլսիս
իմ արխնիս բոցն է լալիս :
Քեզ եմ կանչաւմ բառերով վաս .
անմիսիթար —
կոյս ձիւնաթոյր կոյս երկնատոր ,
թո՞ղ բարձրանայ ծայնդ մարտոր
իմ տաճարում տրտում ու լոռ :
Թող բարձրանայ ծայնդ մարտոր . . .

Ակօթ:

5.

Ասողս հեռաւոր՝
արխն ու ուկի
կաթիլ կաթիլ թորելով
լեցրեց իմ սկին
հոգիների հառաջով :

Ասողս հեռաւոր՝
սեղանս վառեց
զոհաբերական
ազօթքներով երաշազան ,
եւ պատարազեց
պատարազով լուսացան :

Խոր անդունդներից
յուսանատօքէն՝
հեռուից , շատ հեռուից ,
երկրազունդի սառած

60

61

ողբը ամպամած
փաթթեց ինձ նորից:

Աստղս հեռառ որ՝
աղօթքս օծեց
յուսիս թէլերով,
բամբիս լարեց,
ու աշխարհների
ու երկինքների
հեծեծով ցաւով
լոյս երգս հիւսից:

6.

Տեսէք, տեսէք.
լուսնայ թեւեր արծաթ փոշի ևն ցանում
օդերի մէջ զմալլուն,

Տեսա'նք, տեսա'նք.
ճրեղէն մի ծեռք վարդ փերթեր է նետում.
դաշտերի վրայ դողուն:

Տեսէք, տեսէք,
խոլ մի նախուածք բոցի թովքեր է թորում
բոյսերի մէջ սարսուն:

Տեսա'նք, տեսա'նք —
վեհ մի տեսիլք սուսակ ցողեր է մանում
բոտթեան հետք անհուն:

Ժամն է այս յիշումների: Ճողշող
ճաճանչը քո նայուածքիդ, այսօր
նոր — նոր
սահումով, նկատ ծածկեց մարտող
շիրիմը, շուքերի մէջ տուայտող
պատիս,
ու շղարշեց, կոկիծներով այրուած,
ողբազին, հեծուն վիճը հոգիիս:

Բառերդ վանկ վանկ հնչող, մի հեզ
սուզերգի մեղմը մնացոն ըերին.
ինչպէս
երիմն անյախ ծայներ, հին հին
յուշերի սօսակին ևն ծօնում.
օրերի ծածան ցաւից քաղուած —
մոթում
ներկայի ողբը լալով շատ ցած:

Ժամն է վառ լինելութեան, յոյսի,
յոյսի —
թեւերիդ դիւթագեղ, բիւրել
փաթթումի, երաշալի ևւ կանթեղ
ժամն է այս վերայիշումների:
ևւ սիրոյ, ևւ տուայտող իդերի:
Օրերի գերեզմանում մի վառ
լալազար ջահ է բոցում, զոհար
զալուստիդ ողջոյն տալով բորվառ:
Գիշեր:

Ժամն է այս խորհուրդ՝ ուր յոյս ուր սէր
բացում ևն քերովքէի թեւեր:

Պարտէզիս մէջ , լուռ ու մուալլ
պողպատուած են ծաղիկները —
խորհուրդարեր ու հոգեզմալլ:

Եիտ ծառերի տերեւները
ոսկեթափուն փայլիքումով
խարշափում են թառամելով :

Երեք վարդեր՝ մունջ սրգաւոր,
ուրուաւսեսիլ , արտասուաթոր՝
մոմերի պէս մեռելային
սուզի վրայ աշնանային՝
լոյս են թափում արիւնածին :

Մոմերի պէս մեռելային...

Եառուղից լայնատարած
մի վեճ հրեշտակ , կամաց-կամաց
բարձրանում է դէպի Աստուած :

Սրեւելքում ,
բազմաերանգ կրակներում ,
ապօկալիպս մի ծառ սանդուխ
ճաճանչներից ճիւսուած զմրուխուն՝
ծածան ծովում անհունների
կարկառում է մի խօլ ուղի :

Մի խօլ ուղի , մի խօլ ուղի՝
անդունդներում հոգիների:

Մրրիկ և նուր բախուռմ են անյախի մեռած
տարածութիւններում:

Լութեան կանչը՝
ծափ ծափ ալերների արծագանգուած
շառաչ շունչ —
լութեան կանչը անհունի եզերում՝ ար-
գանդը բացուած մի վիճ տատանուելով սովում
է:

Բայց շամանդաղի միջից տարօրինակի ահա
ճառագայթը շամբշութեան —
սուր ,

վառ .
թել՝ արծաթեայ կրակների մէջ կարմիր:

Եւ լութիւնը արևոների ,
պտոյտի հետ աշխարհի
ու մանի
հետ —
թել է ու բոց՝
հոգիների վանիհայ ամբոց :

Սրտերի հեզ ճրագ ,
տիեզերը նուազ ,
սրբութեան մեխակ —
օրիորդը իմ փողփողնէջ՝
կամթել է անշէջ :

Երազի նման
կախարդ մի նշան,
փայլով դիւթական,
օրիորդը իմ լուսանուագ՝
ուղի է սուտակ:

Խորհուրդի շուշան
շամբուշ, ոսկեման,
աստղ սիրական—
թեւարկելով հեռուներում
նա ինձ է կանչում:

Ահա իմ հոգիս
գալիք է, զալիս . . .

ԱՆՁԻԿ ԾՈՎ ԱՉՔԵՐՈՎ

- Աղջիկ ծով աչքերով, ծովը քեզ ե՞րբ համբուրեց :
- Սիրական ուրկի՞ց եկար:
- Աղջիկ ծով աչքերով, արեւը քեզ ինչպէ՞ս զրկեց :
- Սիրական ի՞նչ ես ասում:
- Աղջիկ ծով աչքերով, լուսինը քեզ ինչո՞վ ծածկեց :
- Սիրական ճի՞շտ ես ասում:

Ահա նորից մարմինս հրկիզաշունչ
մահազանգն է զարնում արխնիս:
Ահա նորից երգերս ուրուատեսիլ
խարոյներն են վառում հոգինս .
ահա նորից գլխիկոր,
սրտատոչոր
ալիքները՝ հծծիւն ծովաբոլոր՝
խօլ իղձերիս տենդերն են փրփրում.—
առնակորով
եւ անվրդով
խօլ իղձերիս տենդերն են փրփրում:

Հոգիս՝ արիւն արիւնիս,
հոգիս՝ հոգի հոգիս:
Սաթ, մուշկ եւ մուրտ
նոր մի խորհուրդ
եւ լո՛յս եւ յո՛յս
բոց պարերիս, որ դառնում են խելակողոյս:

Հոգիս՝ արիւն արիւնիս,
հոգի՞ս՝ հոգի հոգիս —
բառերդ սիրադեղեւ,
ոսկեթեւ՝
սրտիս համար նոր պարզեւ,
վայր են իջնում հեւ ի հեւ,
ինչպէս փերթեր վարդերի
շթունքներից հովերի:

Դու ասացի՞ր, որ զիխիկոր, գաշտերում
նոխազաշոնչ պար եմ բռնում ու սուլում
եւ խօլանեւ զինիներով զեփիւռի
տենդն եմ վառում արիւնակաթ իմ սրտի:

Դու ասացի՞ր, որ անտառում, թրթուող
փողն եմ փչում կանչումների խարշափող
եւ խեղդում եմ սօսաւիւնը խորհուրդի
եւ սուրալը անդորրութեան հոգիի:

Բայց չասացի՞ր՝ ո՞ր զամերով սատանան
իմ ծեռքերս արիւններով ողողեց.
Բայց չասացի՞ր՝ ո՞ր մուրճերով սատանան
իմ զլուխս խոր վէրքերով զարդարեց:

Առ վիրաւոր այդ զլուխը,
առ արիւնոտ այդ ծեռքերը —
համբուրի՞ր, համբուրի՞ր . . .

Անաւասիկ —
հաց, պտուղ եւ ծաղիկ
եւ վառ արիւն՝
անտառի սօսաւիւն,
աստղերի հծծիւն՝
եւ խօլ պար
ցաւահար,
առջեր բագինիդ շարած տիսրաշար
մի համբոյըրի համար:
Տուր համբոյըր, հրկիզի՞ր:
Անապատը հոգիս
հրկիզի՞ր.—
հոգիս՝ հոգի հոգիս
հոգիս՝ արիւն արիւնիս:

ԿՈՅՍԵՐ

1. Վառ բաժակ ծաղիկի, ծիծուն զոհար՝
դաշտում դալար,
Հովեր անուշ, հեղ, ոսկեխանող, —
անդորր օրօր . . .
երբ որ,
մեղուն հարրած
խօլ սլքերով, վարդի վրայ՝ տեսնդ վառուած՝
թեւն է շարժում շատ կամաց,
շատ կամաց,
եւ բոյր ու բոց ծրծելով,
մարտելով
մեղը է ըմպում խենդացած —

կոյսը մնում է զարմացած

2. Արշալոյս:
Թթվուուն, ծաղկաթիթեռ,
մեղուներ,
բոյնից, հոյլ հոյլ, դէպի բոյր,
դէպի յոյզ

անցնում են դողդող՝
բազմափող:
Վարդ
կարմբազարդ,
լուսարար տօնավառ,
առաւօտի պայծառ օդումը գոհար,
քնքուշ, անոյշ եւ անարատ,
մի քիչ գունատ
կոյսը,
մեղուների արծաթ լոյսը
նայում է եւ սպասում
պարտէզում:

Համբոյլը
թոյն ու մեղը բազմահրապոյլը —
համբոյլը, համբոյլը
ուզում է նա:

Ահա
եկաւ մեղուն զինովցած,
զիրկը բաց —
կոյսը եղաւ վարդ բացուած:

3. Վարդ, նունուֆար, շուշան, միխակ եւ յափուկ՝
գիերթե՛ր տամուկ,
դողդող սէրեր
ու խօլ յոյսեր —

կոյսե՛ր, կոյսե՛ր:

ՀՐԱԻԷՐ

Տուր
հուր
ծեռքդ
ծեռքիս —
այբուիմ:

Հոգի՛ս,
սիրու իս
տխուր
ու լուս
ու սառ —
սա՞ռ, սա՞ռ —
տե՛ս,
ինչպէս
անլոյս
բոյս
սուզ է
պա՛ռուս
իր նինջ
վիճում:

Տուր
հուր
ծեռքդ
ծեռքիս,
հոգի՛ս :

Եւ տուր
մի լուս,
մի վառ
համբոյր,
ո՛ բոյս
որպէս
զի
լի
քո յոյս
սէրով
փաթթեմ ես քեզ
նոր հրդեհով:

ԴԱՇՆԱՄՈՒՐ

Երկու մոմեր
առջնուը սէւ դագաղի,
որ մի աշխարհ
անդընդապար,
ձայներգումով սօնատի,
կոկիծներ է հառաչում՝
լալիս, ողբում:

Մատներիդ տակ ծնուռող, մեռնող,
խուլ նուազներ ու կայծկլոռող
արձագանգներ՝
սուզ են ասում, ողբ աղեկէզ
յուշեր, յուշեր
լուսնաերես
ու աչքերդ վառ ու տրառում
սրտիս մէջն ես ընկղում:

Ստեղներ գեղնած վղոսկրեայ
ողբ են գշռում ապակեայ
եւ պաղ արծաթ մնչիւնով
զարկ են զարնում վագելով,

կամ բոց թափով՝
ոսկեծառի խարշափով՝
դողովում են մեղմածայն
եւ կանչ կանչում ողբածայն:

Լարի վրայից մի սառ արցունք —
կաթիլ արցունք —
վայր է իջնում սարսւալով,
մինչ դագաղը հեկեկալով
լաց է ասում
մեր սրտերում:

Լարի վրայից կաթիլ արիւն —
մի քիչ արիւն —
հեռուներում անօրպեալի
վէրքն է վառում մի հրեշտակի՝
մինչ դագաղը սրտիալով
հովերի բամբ եղերերգով
պատասխան է հառաչում —
մեր սրտերը փոթորկում:

Ու զիշեր է սենեակում...
Ու աչքերդ մոխրազոյն,
դէմքդ տմոյն —
հեռու, հեռու աշխարհների
ճաճաններով լուսաւորուած —
առջեւը սեւ այս դագաղի՝
առասպե՛լ են կանթեղացած :

ՕՐԵՐԻ ՊԱԱԿԸ

1.

Առաւօտ: Բարի լո՛յս, բարի լո՛յս,
խօլաթեւ արեւ խելակորոյս.
մո՛գ ճառազայթավառ
պա՛ր. —
դարձիղարծ ճախարակ լոյսերի՝
կանթեղ պարմահունի:

Բարի լո՛յս, բարի լոյս ամէնին՝
դաշտին, օդին, ջուրին, թռչունին,
ուկիզմըուխու, պղինձ
արձաններին եւ ինձ:

Այս զիշեր քուն չունեցայ՝
տանջուեցայ:
Եօթնակրոայ պառաւ կիներ
չոր, թառամած բերաններով,
ծուռ ու փոտած ակրաններով,
դառնութիւններ
կամաց, կամաց
ծամեցին:

Առաւոտ.

վե՛րջապէս առաւոտ՝ մարմար սար:
Առաւոտ՝ հուր տաւղահար
երազապար՝
երաժշտի՛ր, երաժշտի՛ր,
լոյս տաղեր սիրայոյզ:
երաժշտի՛ր,
որպէս զի լինի լոյս
եւ արեւ
եւ մարդ լինի երկնապարզեւ
տաղերգութեան մէջ բնութեան
եւ լինի թեւ
արարչութեան:

Առաւոտ բազմաթիթենու՝
լուսաւոր լուու.
լուութեան փետրաշըշուն՝
կտոր անհո՛ւն:
Առաւո՛տ սարսուայոյզ —
բարի լոյս, բարի լոյս . . .

2.

Քեզ հետ միասին
կոպճուտ ճամբան մազցեցինք,
ըլրան վերակ վարդաբոլոր՝
սողուն ճամբան օծառլոր :

Քեզ հետ միասին
այծտերեւի վիունզ վրցուցինք
եւ ժողվեցինք
ապրիմ-մեռնիմ ու թէրվարդեր,
նախշուն, ցայտկուն մարզարիտներ —
քեզ հետ միասին :

Լիճը հեռւում հայլի էր վառ,
մայրիներով ակնապարար
եւ օդն էր զինզ, թրթռուն եւ զով՝
բուրումնալից կարկաչներով:

Թեւդ թեւիս,
քեզ հետ միասին, ո՞ իմ հոգիս,
մենք զնացինք մի ծառի տակ,

ուր կչքող կար մի առուակ
ու նստեցինք—
երազեցինք :

Բոյսերի մէջ
լալազարներ վրոլփողնէջ
լայն ըլբերով մեզ նայեցին
ու իրենց մէջ փափսացին:
Դեղեւաթիռ թիթեռնիկներ
անցան ասես ծաղկած բոցեր
եւ թռչուններ՝ խոնարհ երգի,
դալայլումի
պարզ խօսքերով մեզ խօսեցին:

Ես քեզ սիրոյ բառեր ասի՝
սկայծառ հոգուդ մէջ նայելով.
աչքերիցք լոյս խմեցի՝
խննդանալով, խենդանալով :

Ծաղիկները արեւաբաղ .
հաճանչներով՝ փայլոն մետաղ .—
թրթռացին նորից, նորից —
սէր քաղելով մեր համբոցից:

Քեզ հետ միասին
կոպճուտ ճամբան մազլցեցինք :
Թեւդ թէկիս,
ո՞ իմ հոգիս
բեզ հետ միասին,
ըըլրան սիրով խարոյկեցինք :

3.

Լիճի ափում՝
նաւակների սարսուադով թրթռում :
Աման է կապոյտ,
ջուրն էկապոյտ,
ու արևի համբոցի տակ կոհակներ
լոյս են եւ ձիւն՝ լուսափրիոր փեթակներ :

Հազար ծաղկունք, բլուրների բոյրաթոր,
շրջաբոլոր
գլծն են վառում,
բուրժառում
թէրվարդերի տժգունաշող հմայրով,
ժըլիտով:

Նոհիները, մտածկուտ եւ տիսուր,
աման են դիտում ծաղկահուր
եւ լութեան շղարշից,
զմրուխտ ցանող ստուերների խորհուրդից
զմայլացած՝
լուր են սպասում ու սարսում շատ կամաց :

Եւ հրդեհ է:
Պարտէզների եռուն կեանքում՝ նոր, սողսող,
զոյնզգոյն հալսող,
թիթեռաբոց
եւ հրաշալի եւ մողական, հազար—օծ,
վեհ հրդեհ է:

Ճառագայթներ, փարսիա լրիսեր, բոյսերին
և ծառերին
ծաղկածլման սէր են բաժնում և ափում
կոհակածափ՝ աղամանդ են փըշըրում:

Այսօր այստեղ
ո՞վ է ցանել փերիւզաներ ամէն տեղ:
Ամպն է կապոյտ,
ջուրն է կապոյտ,
հոգիս վաւուած, օդում լո՛յս է զինովցած
և մնողու է խննդացած:

Այսօր այստեղ
ո՞վ է ցանել փերիւզաներ ամէն տեղ:

4.

ՊԱՏԱՐԱԳ

Լալազարներ՝ բոցավառ սարկաւագներ,
ուկեայ դաշտի ալեծուկի պատարագում
ուր ծնծղածայն միջատներ եւ թռչուններ
մոնց օդերին ու ջուրերին տաղ են ասում:

Չիթենիներ՝ կաթնագէմ մայրապիտներ՝
ծունք են գնում թլթըռող շղարշներով,
պայծառ օդին թորում են նոր ճաճանչներ
ու շողերը բռնկում են արծաթներով:

Ճպուռները սղոցով ճռնչում են
հին սաղմոսներ ծառերում սարսւադով:
Շոճիները մատածուտ առկայծում են
լինի անուշ տրտունջը անհունաշող:

Պատարագ է, պատարագ, այսօր դաշտում
ուր բոյսերը նորանոր շաղիկներով
բուրվառներ են օրօրում, խունկ են ծխում՝
ցորեններին իրենց զլուխը խոնարհելով:

ԿԷՍ ՕՐ

Տե՛ս,
ինչպէս
ճութ ճութ կախուած ողկոյզները լոյսերի
ժամը անդորր
զարդարեցին մանեակներով ադամանդ:
Թրթռուն, սահուն, շերեփազի ճաճանչներ
անցան,
պայծառ օդում լուսեղ յոյզեր վառելով
մեղմատատան:
Դաշտերի մէջ
արեւաթափ արծաթները պլռպլուն,
ասես զրիլէժ,
ողողեցին ալիքները ցորենի
և հիւսեցին
թաւշականաչ, յակնթաթել մի շղարշ,
անշարժ:
պարտէզների արտացոլուն բեհեզով:
Մի կարմրալանջ, նուենիի հիր ճիւղից
երգ ասեց.

ծայնը փորձեց ելեւէջուն կարկաչով
ու լոեց:
Շարժեց թեւը նոնչոցով նպուռը
և կանգ առաւ
այս բոյլը թաւ
այս լուռեթեան ծանրը հուրը ըմպելով:

Կէս օր:
Հրդեհումի ժամն է ազուր, արեւաթոր —
անդորր, անդորր...

Ո՞ս սիրուհի,
այս մունջ ժամին ծաղկածլան հեղեղի,
զնանք ափին կարկաչավազ աղբերի
մօտը նստենք
և թեւ թեւի
լունիք, լունիք...

6.

ԵՒ ԵՐԳԵՑԻ . . .

Օրերի հոյլ պսակը գլխիդ
հարս նազելի. —
արեւի վառ հետքը դէմքիդ
հարս նազելի. —
յոյսերի խօլ խօսքը բերնիդ,
հարս նազելի. —
լիճերի պարզ հայլին ձեռքիդ,
հարս նազելի. —
անհուն շողող հմայքը ձայնիդ,
հարս նազելի. —
անդունդ բռնկող կրակը սէրիդ,
հարս նազելի. —
շրջիւնը թաւ ոտնածայնիդ,
հարս նազելի. —
նուենաշող բոցը կուրծքիդ,
հարս նազելի. —
ու մարգարիտ փայլը վիզիդ,
հարս նազելի.
իմ օրերի
լուռթեան տակ բըռնկած
սփոխանք են՝ անոյշ լաց . . .

7.

ԱՀԱՒԱՍԻԿ . . .

Ահաւասիկ, ո՞քոյք, մի քիչ արեւ,
բերկրանքը վարդերի, յոյսի պարզ թեւ,
բոցը արիւնների, գոյները վառ
խորհուրդ ծաղիկների՝ բիբե՛ր պայծառ:

Ահաւասիկ ձայներ համերգների
դալալը հոծ՝ անստաների,
վարսեր հուր հովերի եւ գոհարներ՝
խոտերի մէջ բացւած բոց նայուածքներ:

Ահաւասիկ, փունջ վունջ քաղուած, իմ հին
պատրանքներիս ողբը անդունդածին,
լացերի աղամանդ շողքը լուսեղ՝
հոգուդ առջեւ դիզած ցաւը բիւրեղ:

Եւ արտմութեան կոծը, մունջ ու մնչող՝
օձերի գալտնի ձայնով ստուերներ երկնող,
եւ հեծկտող արիւն՝ շիթ շիթ թորուած
եւ խոհանքներ սեւ մի վիհում քաղուած :

Երբ ժամը զայ . ո' բոլը , եւ ես ընդմի՛շտ
մարեմ կեանքի ճրագը այս բազմավիշտ
եւ ընդպրկեմ անծայր եւ պաղպաջուն
հողերի տակ հեծող ծովը ծփուն . —

Երբեմն ե'կ , Կստի՛ր շիրխմիս մօտ
եւ հուր մատներովդ , այնքան կարօտ
այս յուշերի թրթռուն ծաղիկներից
այս լոյսերից եւ ցաւ բերող լոյսերից .
շուշաններից գողուն բիւր ժամերի
եւ այծտերեւ բոյրից մեր օրերի՝
պատկներ հիւսիր , ո' քոյր , սուզ վառելով
շրիմիս վրայ , կանթեղ քո մատներուն .

8.

ԲԱՅՑ ԱՌ ԱՅՃՄ ԻՄԱՆԱՆՔ

Դու եւ բնութիւն
նոյն տեսիւքի թեւումներն էք գոյնզզոյն ,
նոյն համերգի տաւղահարուն ծայնաթափ ,
նոյն հեկեկուն , կոհակամնու մի ծովափ :

Իմ սրտիս մէջ
լո՛յս էք անշէջ
եւ գարձիդարձ հոգիների վառվուռն —
հո՛յր էք անհուն .

Երբ կուրծքիս վրայ
ես սեղմում եմ տենդիդ ճիչը շատիւղայ .
Երբ բերանիդ կրակն եմ խմում մեղրածոր .
աղունոր , աղունոր .
Երբ բիբերիդ ճանահչ հմայրից խենդացած՝
ես վառ մեղու ,
զինարբու ,
բացուած վարդիդ բոյրն են ըմպում սիրազզած —

համայն կեանքի սրսըփումն է որ իմ մէջ
ջահաշէջ—
իր լուսազարդ հողմաղեղեւ վազումով
ծփծփում է խելակորոյս մի նոր ծով:

Երբ արեւը ծիւն է ծիւնում աշխարհին՝
կտոր-կտոր ծուէ ններով աղամանդ,
եւ սրանչախանդ՝
ծաղիկները թեւ են պարզում լուսածին
երկինքներին— ևս թեւերս աղեկէց
եղկարում եմ հիացումով դէպի քեզ:

Եւ մինք քեզ հետ
լինելութեան ամբողջական եռումի
հուրն ենք յաւէտ.
տիեզերային աստուածականէ կոփիւնի՝
զարկն ենք մնչող՝
տարածոթեան լուութեան մէջ մեղմաղոդ:

9.

ՊԱՏԿԵՐ

Հառագայթները արեւի
աղամանդ են թմբըկում
գողղող շուքի վերայ լիճի:
Մի առազատ շատ հեռուում,
լայն թեւի պէս թռչունի,
կարծես պիտի լնկղմի.

Մի նոխազ՝ պար է պարում
ափում:

ԵՐԵԿՈՅ

Նունիի ծաղիկները թաւշակարսիր
եւ լուսնահիր
թիթեռները՝ երազաթիռ
այրուեցան,
մայրամուտի շղարշներում
եւ մայր մոտան
երեկոյի թուխ անծայրում:

Մեղմ գեղիւոց օրօրուելով,
պարզուկ, անդորր,
թափ վարսերով
շոյում է դաշտ եւ բլուր եւ ձոր
ու մանկիկի բոյքածորան նման շունչին.
արփիամեռ համբոյր սփոռում բուցումներին:

Աստղը տժգոյն, հազիւ ծնած
ինչպէս մարզիխ դեռ նոր բացուած՝
հիանում է ձիթենիի արծաթ փայլով
եւ մեռնումով

ծաղիկների եւ գոյների .
եւ մեռնումով
լուսացնցուղ թիթեռների:

Աստղի հնատ աստղ՝ ե'կ սպասենք . . .
Տուր համբոյրը՝ ե'կ սպասենք
խաւարը նոր գիշերների
ու պլալուն աշխարհների
հմայրը լուսեղ
եւ խորհուրդը հազարկանթեղ:
Ու եկ լինենք, ինչպէս երկու համեստ ճըրագ
առջեւը մեր անյայտ բաղդի —
լինենք ինչպէս զերմ սփոփիանք
բաղուած սրտից աստուածների . . .

Ու ե'կ լինենք ինչպէս երկու համեստ ճըրագ:

ԵՐԻՍՆԱՑԻՆ

1.

Ոսկեփետուր լոյս է սահնում պարտէզում:

Լուսինը մեղք է ածել,
թել-թել՝
դաշտի վերայ, լեռան գլխին, անտառում:

Սատանայական մի նենգ խազ կայ այս գիշեր:
Արծաթաշղարշ ուրուներ,
տժգոյն սոսուերներ փողիողուն,
այս ուշ ժամին՝ ոսկետուն
պար են պարում, խորհրդաւոր ոստերով
և կարկանած ձեւերով:

Ոսկեփետուր լոյս է սահնում պարտէզում:

Միջատները վառ ակունք են փշուած՝
բոյսերի մէջ բռնկած:

Պողպատ հազած ծաղիկները զգայաշունչ
անմռունչ,

հիւթ եմ ըմպում լուսնի դողդող բերանից,
լուսնի զմալլուն համբոյրից:
Մինուքը ճշպոտ՝ սատանի ճրագի հիւսք վառուած,
ծառերի մէջ զարմացած,
ճառագայթուն լարերի վրայ մոգութեան
երգ է բաշխում տրտմութեան:
Մի մենաւոր սիրահար,
յիմա՞ր, յիմա՞ր,
ծիւղի վերայ վարդենիի
դայլայլում է եռուն տենդը իր սրտի:

Ոսկեփետուր լոյս է սահում պարտէզում:

Հովլ բացեց իր սուր թեւեր —
ասես, շարժեց հազար փայլի գերանդիներ:

Օդում ծիծղան, տերեւները սարսրուող,
մուալլ, փողփող՝
վայր են թափում ոսկիներ,
զմրուխաներ:
Եւ սոսուերները զերմ եւ խաղուն ծեւերով,
երկայն արծաթ սանտրերով
լուսնոյ խարսხեաշ վարսերէն
հիւսք են հիւսում տրտմօրէն,
Եւ լուսում են սպիտակ ծայներ
ծառուղիի կախարդ ծոցում:
Եւ լուսում են սպիտակ ծայներ . . .

Ոսկեփետուր լոյս է սահում պարտէզում:

2.

ԽՈՍԱԿՑՂԻԹԻՒՆ

— Լսեցի՞ր, այդ ծայնը հետուում դողաց, Հառաչեց:
— Մի պայ էր — սուլեց:

— Լսեցի՞ր, մի նետ շալով հաճանչեց կարմիր:
— Կանչ էր վարդից վարդու տենդ էր — նայի՞ր:

— Այդ քո վառ ծայնդ, սարսուուն ու դողդոջ,
սաղբանքն է կեանքիս:
— Ի՞մ Սինանայիս, ի՞մ Սինանայիս:

— Այդ քու վառ ծայնդ բաղծանքն է սրտիս:
— Առ, ա՛ռ իմ հոգիս:

— Լուսինը ոսկի, շատ հինցած ոսկի՝ ասես դիակ
է սառ:

— Մի օր պիտ' մեռնի ամենայն աշխարհ . . .

—Ա՞հ, այդ ծայնդ վառ, հմայիչ ու լուսեղ...
գզուա'նքդ հրայրուտ, նայուածքդ կանթեղ.—
ինչպէ՞ս դիմանամ, ինչպէ՞ս դիմանամ...
—Համ եւ բոյր՝ համբոյր...:

—Լսեցի՞ր, պարտէզի ծայրում. թեւ թեւի բաղխեց:
—Ո՞վ զիտէ ո՞վ է... նա էլ սէր բաղեց...:

Եւ լսուում են սպիտակ ծայներ
ծառուղիի կախարդ ծոցում:
Եւ լսուում են սպիտակ ծայներ...

Ոսկեփետուր լոյս է սահում պարտէզում:

3.

ՆԱՄԵՐԳ

Կոկըռոցը թախծալի
գորտերի
հեռուում, սիրտ են պատուում:
Ու՞մ են կանչում
կէս զիշերին,
կանանչ-կանանչ, ուռած, սառած,
լիճի ափին բոլորուած —
կէս զիշերին
Այս գորտերը տիսրազին:

Տաղ են երգում լուսնակին —
պաղ, պաղ, պաղ:
Սեւ ցեխի մէջ ճահիճի
դիակ են ուտում որդերի —
լպրտուն մնդր ու թոյն —
նուրբ գորտերը զգայուն:

Եւ պոռում են կրրալով
մարմնի բոլոր տինչանքով,
կարծես ջուրի երեսից ,
ջուրի տանջող շողբերից
հալածուած ,
անիծուած ,
մէկն են կանչում հեռաւոր՝
գաղտնիքներով մենաւոր:

Ու՞մ էն կանչում , հեզ գորտեր —
նրբասարսուս մեր քոյքեր ,
Մի պուտ սրտով կսկըծող ,
պատուած ծայնով մշտադող ,
նազ — երազով
ու դուրս պրծած աչքերով ,
գորտերը պաղ —
աւա՛ղ . աւա՛ղ —
որի՞ց են սէր աղաչում
ու պաղատում ու հեկեկում . . .

Ոսկեփետուր լոյս է սահում պարտէզում . . .

4.

ՄԻ ՄԵՆԵՐԳ

Ա՛ռ , լուսին
տիսրազին ,
սիրոս վառ
ա՛ռ:
Ճաւերի
հեկեկանք ,
սին սիրանք
թախիծի
է . —
սիրոս վառ
է:
Բոցերում
շլարշիդ ,
թեւերում
հմայրիդ ,
թող կորչին
սրգածին
պատրանքներ

Եւ խոհեր՝
ինձ մաշող
Եւ ալրող
այս կեանքի:

Ես մնանել
իմ ուզում՝
քո կախարդ
ոսկեզարդ
անհունում։
Ես մնանել
իմ ուզում։

Քո մեռած
ժըպիտի
սաղբանքով,
քո սառած
համբոյրի
մշտահիք
սաւանով
քօղարկիք
իմ հոգին,
ո՞ լուսին։

Առ, լուսին
տիրազին,
սիրտս վառ՝
ա՛ռ։

5.

ՍՈՒԱԿԸ

Սոխակը
գալլալում է մելամաղձոս
տժգոյն շողբում լուսնափայլի.
սոխակը՝
հրանուտ հայլի
ճառագայթի։ Դողդող, զերմոս,
բոցակիզուած եւ խենդացած
վարդերի բոյր համբոյրներից,
շուշանների շող շունչերից —
սոխակը
կարմիր ծայն է սուտակացած։
Սիրտը տիսոր՝
ճառագայթի շամփուրով հուր
կըակեցին
և տաղեցին
սիրոյ հեւքով անհունածին։

Հմա՛յք է թափում մեղբածորան,
հիւսք է հիւ սում ոսկեման,
սոխակը

թըրթըռում է կանթեղի պէս
ու դայլայլում աղեկէզ —
սոխակը, սոխակը:

Դժբախտ, դժբախտ, խօլ սիրահար
եւ տեսապաշտ սին տաւղահար, —
սոխակը երգ է վառել,
կրակ է ցանել
երազաթիռ այս լուռ ժամին
սաղրանքածին:
Սահս սիրող պիտի ճամփի —
մաշուած, այրուած, հմայք-տենչանքի
ելեւէջող հեկեկանքով
ու ցաւերով:
Ասես շուտով պիտի մեռնի
ծառի տակը
խօլ սոխակը, խօլ սոխակը . . .

Ասկեփիստուր լոյս է սահում պարտէզում:

6.

ՀՐԱՒԷՐ

Ծառերի մէջ,
լուսնարծաթով սրսըլիուն,
ծառերի մէջ
ծիծաղ վազեց կարկաչուն,
եւ թաւ ծայներ,
հովահալած վազումով
մունջ հառաչներ
խարշափեցին լիճի քով:

Այնտեղ անցաւ
սպիտակ հարսը կախարդի.
այնտեղ անցաւ
խորհուրդ ճրագլւ երազի.
այնտեղ պարեց
հարբած յոյսը իոլութեան.
այնտեղ երգեց
անոյշ ծայնը զմայլութեան:
եւ խորասոյզ
լուսնոյ լոյսում ընկղմած,

խելակորոյս

տենէեր ծնան սքանչցած :
Եւ հիր թեւեր՝
ծաւալ, ծփուն, դողահար՝
եղան հրաւէր
հոգիներին մշտավառ :
Եւ շաջեցին,
հառաչեցին մի անուն:
Սինանախ'ս,
Սինանախ'ս,— բոց անուրջ.
Սինանախս
պար է պարում կաղնի շռոջ,
ոստ է ոստում
ոտնաձախով շառաչող,
հիւր է կանչում
դարձիդարձով բազմաքօղ .
հմայք է տալիս
արտացոլուն լոյսերին,—
Սինանախս
հուր է բաժնում ամենին .
ամենին, ամենին:

7.

Սինանախս, Սինանախս, խելակորոյս
եւ շողշողուն եւ դողդողուն լուսնոյ լոյս .
վա՛րդ մի քիչ վարդագոյն
եւ տժգոյն .
ասո՛ւալ ոսկեայ վարսերով ,
սուտակաշար օղերով:

Սինանախս, Սինանախս, երազ համբոյը
եւ ձիւնաթոյը սիրոյ աղջիկ բազմահրապոյը ,
Սէ՛ր՝ այնքան թախծաբեր,
մահաբեր .
սէ՛ր՝ այնքան խելայեղ
եւ բխուիլ :

Ազքերիցդ, Սինանախս, երկու վժուկ
առէն երկու արտասուք .
երկու վըհուկ, մեռած լուսնի նոր շողերից ,
դէմքիդ արծաթ ցոլքերից՝
գուշակաբեր գաղտնիքների քող հիւսեցին
ու պարտէզը ծածկեցին:

Պղնձաթոյր տերեւները
լաց են լալիս ոսկեարցունք
եւ վառում են բոյր ու խունկ
սուր սէրերի սաղրամքները :

Խօլ երգիդ մէջ, Սինանախս, երկու ծայներ՝
եղան երկու հառաչներ
ու մեռան...

Խօլ ճառիդ մէջ, Սինանախս, երկու բառեր՝
եղան երկու նենգ հրաւէր,
սիրացան...

Խօլ պարփիդ մէջ, Սինանախս, երկու բայլեր՝
թողին երկու խոր ստուերներ
եւ անցան...

Երկու վլորուկ
պար բունեցին տրտմաշուք.
Երկու վհուկ
խենդ ծեւերով դառնալով
աբժաների շառաջները պատմեցին
ստուերներին:

Ոսկեփետուր լոյս է սահում պարտէզում:

8.

ՃԱՌԱԳԱՅԹԸ

Ես հոգի եմ լուսնաքաղ՝
ոսկէ խաղ.
սալամանդը արծաթի,
մրրկաբեր շունչ բոցի:

Ես հոգի եմ լուսնաքաղ, —
օ՛ձ եմ պաղ:
Լիամագիլ ոտքերով,
կրակ գարծած թեւերով,
տժգոյն սատափ աչքերով,
ես անցնում եմ, ու սուրում
պարտէզում:

Երազների շղարշներից,
մշտաճաճանչ շողակաթից,
շամբշութեան շամանդաղից,
շաղափների շաջումներից՝
ծալք ծալք ծածան ծաւալուող,

սիրահրաւէր ծանը շող
բերի , բերի , շիթ առ շիթ ,
լոյսով տժգոյն եւ վոխ:

Ես հոգի եմ՝ լուսնաքաղ՝
վառ դագաղ .
սալամանդը արծաթի ,
երազաթիու հիւսք բոցի
եւ հեշտաշունչ եւ հրաշազան
հմալքների խօլ հրարան:

Ոսկեփետուր լոյս է սահում պարտէզում:

Ի Տ Ս Ա Լ Ի Ա Յ Ի Ն

ԻՏԱԼԻԱՅԻՆ

Պարտէզումդ հրաշածին, բազմանըւագ
արեւաթագ. —

Խուլիս իմ,
քո յուշերիդ հետ մոլեգին՝
եղայ սարսուոտ, տենդոտ փափաք:
Ներքնակրակ աւիւն եղայ
դաշտերիդ վրայ
եւ մեղեդիդ ըմպեցի՝ շրթունքներով
իմ դալկահար,
եւ երազդ ժողվեցի՝ գերանդիով
լուսապայծառ:

Բլուրներիդ եւ գետերիդ շուրջը սոզուն,
ճամբաներդ վարդազարդ
ճախսարակ են լոյսերի գեղազուարժ:
հոգուս խորքում սեւեռուն:

Քաղաքներդ ոսկեքանդ ու զմրուխտաշէն՝
անուրջներիս թեւերով սուրող, նիրհող՝
նշաններ են աղամանդ հեռուներէն,
ջահուած կրակով աստեղաշող:

Դաշտից ի դաշտ ես անցայ ու լեռնէ լեռ
ու արեւդ մանեցի վառ մատերով.
աստղերիցդ ժողվեցի նոր գոհարներ
եւ մանեսկներ շարեցի տաղերգելով:

Եւ եղայ յո՛յս յուշերիդ հետ,
թե՛ւ՝ խոհանքիդ լայն ափերին
ծա՛յն՝ աղբիւրիդ կարկաչի հետ
ու սէր եղայ փառքիդ սրտին:

Դաշտից ի դաշտ ես անցայ ու լեռնէ լեռ
ու արեւդ մանեցի վառ մատերով.
դաշտից ի դաշտ ես անցայ ու լեռնէ լեռ
ու հըրաշքդ պատմեցի տաղերգելով:

ՎԵՆԵՏԻԿ

Վենետիկը հին գոհար,—
պատահա՛ր:
Վենետիկը երկնավառ՝
լոյսին լրյս տուող խօլապար . . .

Ճակտին վրայ հրաշածին
քաղաքին,
թիթեռումը գոյների
առկայծում է հեշտաւէտ
եւ լուում է թախծագին
զութակումը յուշերի՝
արեւելեան տրտմութեան
գեղեցկութեամբ խնկաւէտ:

Վենետիկը հին գոհար .
պատահար
եւ անո՛ւրջ :

Լուռ ու մունջ —
նման հէքեաթ շղարշումին
ուկեզօծ,

նման հրեղէն հայլին
մշտաբոց —
երազներ են բոլորում կաթոգին:

Սնկիւնաւոր շուքերի
պողպատափայլ շողերից,
պալատնելի դրոներից՝
արծաթազրահ ուրոներ
եւ ստուերներ —
թէ ռճիրի թէ սիրոյ —
սողոսկում են ասելով,
տարօրիեակ ծ
ողբերգական մոայլ երգեր:

Մարմարները գոյնզգոյն,
բիւզանդական քանդակով,
սոսկատեսիլ օձերով
զրանցքների հեռապաց
բիբերի մէջ աղտորուած՝
ասես հմարի մի վառ բոյն,
պատկերում են արծաններ
հրէշ ձեւեր:

Եւ լուսաշէն զարդ վարդեր,
ծամածռուած ծաղիկներ,
մարզարիտներ աղամանդ՝
քարերի մէջ հոյաքանդ՝
կանթեղում են ամպերին—
պիշ-պիշ նայում արեւին:

Պալատի մէջ աղօթքի
մեծ աչքերը վառվուուն
ուկեզմբուխտ սուրբերի՝
յառում են լուռ, պատղաջուն
զարդիզարդած պատերը
աստուածաշունչ դէպքերի,
ուր կիները,
ուր հիացած մոգերը,
ուր ասպետներ
ու նրկնային քերովբէներ
շղարշն են պատում դժոխքի:

Անեստիկը մունջ անուրջ
եւ դիակ՝
ուկեթառամ, ուկեթագ...
Անեստիկը՝ բոց փափաք,
յիշատա՞կ
եւ մեղեդի մելամաղծոտ
երգուած շիրիմ սիրոյ մօտ:

ՖԻՇԵՆՑԱ

Վարդերիդ տակ ծաղկաժպիս,
լուսացնցուդ, վառ եւ վտիս,
պալատներդ ողբերգական,
քերդանման,
զմբէթներդ վերասլաց,
արձաններդ թեւեր առած,
քո փառքերիդ թագն են պահում
եւ անցեալիդ տաղն են պսում :

Պարզ երկնքիդ լոյսը կապոյտ՝
սալորագոյն եւ թաւշերէզ,
առկայծում է սքանչանքները խոր քո հոգուդ՝
համբուրելով ըլուրներիդ շուքերը հեզ,
համբուրելով մայթիներիդ ցոլը բեհեզ:

Ես պարտիզպան՝ պարտէզիդ մէջ աննիւթացած,
ուր նիւթացած
հեւք կայ, սպասում եւ յիշատակ,
քաղցրանուագ

ուր կան երգեր
նոր գոհարներ .—
ես պարտիզպան եղայ տենդոս,
ու բահեցի քո երեկոն, քո առաւօտ :

Ո՛ Զէլլինի, Լէօնարդօ ու վէս Դանտէ,
ձեր քաղաքը լուսեղ բանտ է
ուր փակեցիք ձեր երազներ ու խոհանքներ
ու ցանեցիք հազարզմբուխտ նոր անհուններ :

Ու մենք ահա ծեզմով հարուստ
ծեզմով պայծառ եւ կենդանի՝
շարում ենք լոյս, շողակ ու քուստ
պսակի վերայ մեր օրերի:

Ու մենք ահա ծեզմով հարուստ
ջահն ենք վառում պատրանքների,
պարտէզի մէջ
վողվիողէնէջ
բիւրախորհուրդ գիօրէնցայի:

Հ Ռ Ո Մ

Կոստանդինի դրան առջեւ յաղթական,
աշնանային մեղմ հովեր,
սրփում էին, սրարփումով դիմական,
մեռած, մեռած տերեւներ:

Ապեան ճամբան՝
հին յուշերի մեռելաստան,
մելամաղձոտ եւ սողոսկուն
երկարում էր դէպի հեռուն:

Մահի շունչ կար այդ վայրերում
եւ հեկեկանք եւ երգ տրտում.
եւ կար յոյսի վիշտը թաղած
եւ լաց՝
հին փառքերի անհետացած:

Կոստանդինի դրան առջեւ յաղթական,
լալիս էին տերեւները անկենդան . . .

Պ Ի Զ Ա

Տեսլին վրայ սարսռազին
Պիզային՝
լուսնեակ մաղեց իր ոսկին
եւ կախարդեց եւ հիւսեց՝
հրաշք հմարով ոսկետուն
մարմարները — հուր նիբհուն:

Օ՛ աշտարակ սառ երազի,
պինած թուշանք նոր սատափի,
լո՛ւս քանդակուած
միծ մուրճերով բիւրեղացած.
թե՛ւ մոլեզին
եւ նուրբ ժանեակ աստուածային:

Եկեղեցի՝
ուր յոգնարեկ աղօթեցի.
մատաղ, չքնաղ մաղօննայի
յոյլ աչքերում՝
սիրոյ հրաշքն ուր քաղեցի:
Մեռելաստան, —
օ աննման պալատ մահուան,

ուր հոգետանց պարզ նկարներ,
դժոխքից բաղուած լուռ ծիծաղներ
անդընդային
լուր են բերում լուռթիւնին:

Պի՛զա տրտունջ —
ոսկերազ սառած անորք:
Կանթեղացած
աղօթքներով ցնորահալած՝
դու սպասում ես դալկանալով,
լոյս աչքերդ աստուածավին
աչքերի մէջ միսրճելով:

Կախարդական սլացքներով,
գեղ, հեղանիւթ, հեռազգայուն,
մունջ եւ տմոյն —
դու սպասում ես նոր յայտնութիւն,
դու սպասում ես սաղմոսելով,
աղօթելով, աղօթելով . . .

Օ՛ հրաշք, սքանչանք եւ տրտմութիւն . . .

PIETA

Կո՛յս չքնաղ.
խածած — նուռ, կարմրաշող հոգիդ,
դիակը պաղ
պատում է քո վիշտով վտիտ.
դիակը պաղ ծունկերիդ վերայ՝
պատկած լուռ. նայուածքով վանեայ:

Աչքերդ թաւշեայ բոց.
կիսազոց
նայում են անյայտին. նայում՝
սիրոյ կոյլ նայուածքով, անզօր,
անիմաստ, ընկղմած վիշտում
անսովոր:

Արցունքդ ամօթխած, փայլուն
ողբ սառած,
ինչպէս մի ադամանդ մեռած —
պաղպաջուն նըշան է ներհոն :

Ես չոքած առջեւդ. ո՞ կոյս,
սրբում իմ երազս անլոյս
եւ զոհում իմ սիրտս սարսած,—

որ է հեզ մի գառնուկ սպաննուած ,
դաշունուած մի նոխազ անմեղ՝
կարկամած շրթներով ահեղ:

Պիտի գա՞ն, պիտի գա՞ն, ասի՞ր . . .
Զէթը նոր ճրագի մէջ կարմիր
շուալ լեցնենք ու սպասենք, ո՛ քոյր . . .
կամ լինենք մի հրատափ համբոյր,
մի վառ թեւ,
մի արեւ :

Քերովը՝ լինեմ ես —
սիրե՛մ քեզ՝
ցօլասիւու, խօլ-զեփիւու սէրով,
լուսահիու, բարձրաթիու տենսդով . . .
Սիրե՛մ քեզ
կոյս իմ հեզ,
բարձրանամ ինչպէս թուփ աղէկէզ —

սիրե՛մ քեզ:

Պիտի գա՞ն, պիտի գա՞ն : Աղօթենք .
հնեկեկանք եւ լոենք եւ լոենք . . .

Աղօթենք :

(Սր. Պետրոս. Հռոմ.)

ԳԻՇԵՐ ՖԻՕՐԷՆՑԱՅԻ ԴԱՇՏՈՒՄ

Գիշեր: Լուսին:
Սիրով սրտին .
Կրկինք պլուած երկրագունտին
լում է մունջ հսկայ ճախրը անջրապետի
եւ խմում է անդորրութեան մարգարիտի
փայլը լուսեղ,
մեղմականթեղ :

Գիշեր: Մի զին
սառած ծայն է թորում լուսնին:
Ու շրթները վարդերի տժգո՞յն, տժգո՞յն,
սարսում են լուսթեան մէջ հեղատմոյն
ու նոճիներ՝
խոհանքների ուրուականներ՝
համբուրում են, մարած-ուկի
շողշողումը ճանանչների:

Գիշեր: Լուսին:
Արծաթ հազած նապաստակներ վազեցին
թուփերի մէջ սարսուադող

Եւ ոսկեթեւ մի ծի վողիող
անցաւ շատ ցած վրընջալով,
ինչպէս բռնկած սուսակ մի հով:

Մագիրիս մէջ աղամանդներ դողացին :
Վախցայ քայլել...

Մէկը բող է հիւսում թել թել՝
օդում :

Սիրով սրտին ,
երկինք պլւած երկրուդունդին .
կախարդ բո'ց է, կախարդ վի՛ն :

ԴԱՆՏԵ

Եւ էր հեռուում մի կանչ
թաքոն եւ խորատանջ .
ու թեւեր
մահասուեր,
աչքերը վառ , ոսկետեսիլ,
ծածկեցին՝
մինչ վրհուկներ կախարդեցին :

Եւ էր հեռուում մի կանչ :

Գունաթափած կիներ .
զնացի՛ն , զնացի՛ն
ծանրադանդաղ ,
տարին արծաթ դագաղ :
Անհեծկտանք ընկա՛ւ՝
ընկղմած նաւ՝
դանուքն :

Ու դարը սեւ հեծեց .
նրան հալածեց :
Արի՛ն ու տօն... Հրեղէն

Երգեր Երգեց
Նա՝
Արտերի վերայ :

Ու երկինքներ՝ եղան
յոյզերի խօլ հրարան.
անկարելի,
քստմնելի
ճամբաներ պաղ՝
դագա՛ղ, դագա՛ղ
յոյսերի :

Ու եղաւ պար
յամոյների յակնթաշող,
սուրերի տակ դողն ի դող.—
մինչ նա
լուռ սատանայ
եւ տեսանագ
եղաւ :

Ու սիրահար—
մող անհունի
ոսկեճարմանդ խորհուրդների—
ու սիրահա՛ր—
որովհետեւ մեռաւ
հեծկտող քնար՝
Բէատրիչէն :

Եւ էր հեռւում մի կանչ...

Երգե՛ց հիասկանչ՝
աստեղաշէն
Դանտէն :

VILLA BÖCKLIN

1.

Վիլա Բէօկլին՝ վայր հովատն
ըրբան ծոցը պատսպարուած՝
ուր ջուրերը հազարթոչուն.
սաւառնումով արծաթացած
լո՛յս են մաղում արձաններին,
եւ պսակազարդ՝ բացւում, ցատկում,
ողջոյն տալով երկինքներին՝
վաթթուած կապոյտ սաւառներում:

Բայց իմ հոգին՝ դաշոյններով
տառապանքի վիրաւորուած՝
մեծ արձանիդ պէս փշրուած
եւ ընկճուած—սարսափելով,
վիլա Բէօկլին, միշտ երգն է նոյն,
սրտակտուր, անագորոյն,
լսում կեանքի արձագանքից
ու հեռաւոր խորհուրդներից...

2.

Չերմանոցում, նոր-նոր, պէս-պէս
ծաղիկների միայնացած
խումբը տժգոյն, մի աղեկէզ
մեծ վարդի շուրջ ստուերացած,
ու սպրդած շրթներով քաց,
լոյսն են խմում նրա արիւնի՝
որպէս զի կեա՞նք մի քիչ լինի :

Այդպէս եւ մենք, սրոտով ընկճուած,
լինելութեան դաժան ճամբում
երազների շողն ենք ըմպում
ու սեւ զինին պատրանքների՝
որպէս զի կեա՞նք մի քիչ լինի :

3.

Վիլա Բէօկլին, քո նոճիներ՝
երազների փետուր-փետուր
իջնող սարսուռ՝
ինչքա՞ն այրուած յիշատակներ՝
գիտն պատմել ծայնով տիսուր:
Եւ երբ քամին
լաց է արորում ծառաստանում՝
ծաղկապսակ քո լայն ուղին
հին սէրէրի ջահն է մարում
ու ողբ ողբում սեւ ամպերին.

4.

Պարտիզականը . . . տղաք վիախան . . .
 Պէտք չէ՝ ձեռք տալ ծաղիկներին,
 աւազանի խեղճ ծուկերին,
 ջերմանոցի կարմիր դափլան...
 Երբ մենք կ'երթանք մեր Հայաստան՝
 Երեւանի այգիներում
 կրնաք բաղել իմնձոր . ծիրան .
 յայնատարած մեծ դաշտերում
 կրնաք ազատ ժողվել շուշան
 եւ մարեմնոտ եւ լալազար՝
 վարդեր պէս պէս ու անհամար :

Հայրի՛կ, գնա՞նք մեր Հայաստան :

5.

«Մեռելների Կղզին» լքած .
 նոճիները՝ խումբ-խումբ ցցուած
 դէպի երկինք տրտմութիւններ՝
 այս ժայռերում ապաստանած
 մունջ շուքեր են կամ հոգիներ:
 Մահ բերողի սրինզը այստեղ
 մի հոգետանջ երգ է սուլում . —
 մի պատմութեան ծայնը ահեղ
 սրսրիումով սուգ է սըմոււմ:
 Ճերմակ քղամիդ հազած կիներ
 սաղապանեմ անցան, գնացին .
 ու ժայռի մօտ ուրուականներ
 յիշառակին խունկ ծխեցին :
 Միայն մենիկ աղբիւրն է որ՝
 կրկըում է հեղակայլակ
 ու ծառերին պատմում աղուոր
 առասպելը արեւաթագ :

Ու ամէն ինչ հե՛ւք է, վիափա՛ք :

6.

Սիւնի վրայ մի կիսարծան,
հին, կարարեան մարմարիոնի,
հուոմէական լէգէոնների
մի վեհ ասպետ, մի խրոխտ իշխան՝
խստ նայուածքով Դիոկիսիանի,
խորն է դիտում ծառաստանի :
Եւ ո՞վ զիտէ, ո՞ւմ է սպասում .
դարէ ի դար, հուոմէացին .—
իր գունդմօրը, թէ սիրուհին՝
փոշիացած փիեզօլէում :

7.

Պոմպէական սեւ սրահում,
կարմըրազարդ պարուհիներ
պար են դառնում ու պատրանքներ
տաւզահարում :
Ոյձմարդերի
սատանեկան ոստումները
սողոն, ցատկոն, խօլ ծեւերը,
հեշտանկների
լոյս են սըմբում՝ կանաչ կարմիր՝
կանանց վրայ բազմաթրթիւ :
Ու մերկ կիներ, զահեր բռնած
սադրանքների տենդով վառուած՝
նուրբ եւ կապոյտ սիւների շուրջ
բաժանում են սէր եւ անուրջ . . .

Արնօլդ Բէօկլին, ծեր օրերին
խաղ էր բաշխում իր պատերին :

Ամէն զիշեր տասներեքին ,
դուրսը՝ լոիկ, մեծ պարտէզում .
նոճիները* մայրիներին
ծնծղաների ծայն են ծայնում :
Նոխազոտներ, ծովանոշշներ,
լեռնէն իջած հիր հոգիներ,
փխոռնիսներ աղօթարար .
սուզի կիներ անմխիթար,
ծովէն ելած, բոցաճաճանչ
կուզ էակներ — կանա՞նչ, կանա՞նչ --
եւ ի՞նչ զիտեմ դեռ ի՞նչ ստուերներ
եւ յուսատու եւ մահաբեր .
պար են բռնում եւ հեկեկում —
ամէն զիշեր այս պարտէզում :

Ու զալիս են, սեղանիս շուրջ
բոլորւում են, մոռւնջ, տրտունջ —
ամէն զիշեր տասներեքին
հոգիները այս տենդազին,

ու փափսում անյայտ խօսքեր
ասում խելառ հանելուկներ
ու ինձ կանչում իրենց աշխարհ՝
անհունապատ, ոսկեխաւար . . .

Ամեն զիշեր տասներեքին
ոգիները անդընդածին,
այս տեսպապաշտ խորհուրդ վայրուժ:
զաղոտնածածուկ տաղ են ասում:

9.

Զգոյշ, տղաս,
թիթեռնիկը պէտք չէ՝ բռնես —
նա պլպլուն
հեղասահուն
ոզի է մունջ և աղեկէզ. —
ծեռքդ կ'ացրես
ու կուլս :

Զգոյշ, տղաս . . .

ՅՈՅՈ

Օրը այսօր մեղմաճաճանչ, յոյս բերաւ նոր:
Ու տանս մօտ վարդասարդը բոցաբողոք
առաւօտեան ժամը պատկեց և հոգուս մէջ
լուռ հրեշտակներ թեւեր բացին անհունաշէջ:

Իմաստացած, խաղաղ սրտով, պատուհանից
ողջոյն տուի դաշտին, սարին արեւալից,
և օծումը՝ ուկի ցանող վարկեանների,
հրաշուրթ օդի՝ խոնարհաբար ընդունեցի:

Օրը այսօր մեղմաճաճանչ, յոյս բերաւ նոր:
Երգեց այզը սրբնաօրէն, մեղեղնածոր.
ու արեւը՝ ծաղկածլուն հրաշապարտէզ՝
հորիզոնում բոցեր թորեց լափէզ-բեհեզ:

Միլոտ իմ, օրնենենք ճաճանչների խաղը՝ կանթեղ
ու ապրենք պարզ՝ օրուայ յեղուկ դաշնը գեղգեղ:
Լինենք լոկ սէ՛ր և հաւատանք այս խորհուրդին
և հաւատանք ծաղկաժպիտ, փողփող լոյսին:

Անյայտ վաղը ո՞վ զիտէ ինչ պիտի բերի...
Չը մտածենք շղթաներին հսկումների
ու մոգասփիւո այդ այզը նոր գրկախառնենք
ու օրուայ հետ՝ պայծառ պատզամ և յո՛յս լինենք:

ՕՐՆ Է ՏՄՈՅՆ..

Օղն է տմոյն՝
մարզարիտ մոխրագոյն .
հին արծաթ
դողակաթ,
բլրան շուրջ մութ ազաթ :

Ուռենին
վերասլաց նոճին
նայեցաւ եւ ասեց.
«ո՞վ էր այն հառաչեց»—
ու լռեց :

Մինչ լիճում
մի ծայն է աղաչում...
սի ամպ է ընկղմել
ցանցի մէջ ոսկեթել -
ուռին է բանտարկել :

Ու լիճում
ուռին է հառաչում...

Օղն է տմոյն -
մարզարիտ մոխրագոյն :

Մի զանգակ
հեռանուագ՝
ինչպէս բոց մենակը ակ,
ամպերում վարդագոյն
եղաւ վառ սօսաւիւն .

ու ճախրեց հեւ ի հեւ
նա հնչակ լուսաթիւ
օդի մէջ մեղաքւ :

Օղն է տմոյն —
մարզարիտ մոխրագոյն :

ԵՐԳ

Ո՞ւր երթամ .
եւ որո՞ւն սիրտս իմ ես բանամ . .
Տա՞մ —
կուրծքիս տակ
փա՛կ .
կարկաչող աղբիւրի տենդը վառ
եւ ծովը՝ անհամար .
խոհերիս
ցաւերիս —
որո՞ւն տամ . . .

Թող
լուսնշող
մի դագաղ
պաղ
ինձ համար պատրաստեն
ու ոսկէ գամերով շուտ գամեն .
թող
մեղմաճեմ
տխրաղէմ .

ինձ տանեն ու թաղեն
մի բլբան զազաթին —
ուր աստղեր՝
հեւացած թիթեռներ՝
պլազմոն խօսքերով
պատկազարդ պարերով
ինձ պիտի օրոյն :

Ո՞ւր երթամ
եւ որո՞ւն սիրտս իմ ես բանամ . . .

եւ որո՞ւն ես ասեմ
տրամալաց սեւ բառեր իմ վշտի,
տւայտանքի .
եւ որո՞ւն ես ասեմ ,
հառաջեմ
ողբը հուր իմ սիրոյ :

Տա՞մ —
իմ զիրոխստ երազիս
ու տանջող պատրանքիս
բոցը օձ
իմ մշշ զոյ —
թող վառեն իմ դիակ
մեծակրակ
եւ լինի
տօ՞ն ,
երփներանգ հորիզոն ,
եւ լինի
լոյս —

Խսաւարով փաթթուած .
մըրիկով աւերած
սրտերում :
Եւ լինի
լո՛յս...

Ու գիշեր երբ մթնի ,
շիրիմս իմ ծածկի —
պիտի զա՞ն , պիտի զա՞ն
ոգիներ
ծովդրւան
ու բլրան զագաթին՝
հրաշածին,
կաթոգին,
նոր երգեր պիտ՝ երգեն՝
փոխ առած իմ սրտէն .
ու պարեր —
հեղասահ կոհակներ՝
իմ երգած երգերի
դաշնայորդ ձայների
մեղմածալ շեշտերով .
ձեւերով
պի՛տ պարեն:

Ո՞ւր երթամ
եւ որո՞ւն սիրտս իմ ես բանաժ . . .

Սիրտ իմ, լո՛ւռ . . .
Ի՞ւր
երթամ . . .

ՈՐՈՆՈՒՄ

Նորից ահա ուղեկորոյս
եւ անփեթակ մեզու շուարած ,
մութերի մէջ ես խորասոյզ
փնտուում եմ քեզ բանդագու շուած :

Գիշերը մունջ, աստեղացան
թաղը զլխիս պիտի դինի,
եւ թագաւոր եւ ուրուական
պիտի լինեմ անհունների:

Ու աստղերի նըւազներում
պիտի լսեմ եղեմական
զրիներ սուրբ ձայնիդ զմայլուն —
ես թագաւոր եւ ուրուական:

Եւ երկնքում խումբեր պայծառ
պիտի վառուեն, արծագանգին,
պիտի հնչեն հազարքընար
ու տարփատինջ պիտի երգեն:

Եւ երկնքում խռւմբեր պայծառ
պիտի ասեն տաղը սրտիս,
խօսքը տխուր, անմիտիթար,
ահով լիցուն իմ ցաւերիս:

Եւ երբ զլսիս թագը թաղեն
ճաճանչները արշալոյսի՝
սրտիս մէջ լոյս պիտի ածեն
ու սեւ զինին քո յուշերի —

որպէս զի թե՛ւ լինեմ յոյսի:

ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

ԱՍԱՑՈՒԱԾ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԱՇՏԻ ՀԱՄԱՐ

Աշնանամուտ երեկոյի եղեգնափող մի եղերերգ՝
Արարատեան դուրան դաշտի
զոնաթափած տօսախներում, պարտէզներում՝
զմրուխտալաց թախծ է թորում:

Հովեր խօլ խանդ,
սուրումներով սրտաբարախ,
ասես հազար հեքեաթներում մեռած կոյսեր
անբջական —
զամբիւղների, համեմների բոյրով մատադ,
ուլունքներով եղեկրուաքաղ,
պարարում են արտը լուսեղ
ու բո՛ց նետում ամէն մի տեղ:

Եւ այբուում են այգիները,
ծիրանների ոսկեգանհզուր հրդեհի մէջ՝
ուր լո՛յս անշէջ, թե՛ւ դիւթացած,
աննիւթացած —
հողիներ են սուրում, անցնում
Արարատեան ցողուն դաշտում:

Եւ այրուռում են այգիները
լուսափողիող ծիրանների
պատմունանի ծալքերի տակ սարսռադող .
ու ցողաթուրմ մը լուսի իւն,
մի հեզ, մի խոր անդորրութիւն –
ինչպէս խոհեր սրանչացած ,
աղօթքի խօսք բնութիշա սառած –
ու ցողաթուրմ մի լուսի իւն՝
ուսերի վրայ տարուած դագաղ՝
հեռանում է ծանրադանդաղ :

Հեռուռում Մասիս, ամպիրի հետ անծալքացած .
ցուցանում է աշխարհներին
ապօկալիպս Հայաստանի սիրտը ցցուած .
պատմում զարզանդ,
արմենաւանդ դէպրը վերջին
և արիւնուռուշտ շղարշ է նետում իր վեհ գլուխին :
Փոքրիկ Մասիս, մօտը կանգնած ,
ճառագյթուն շարականի ծայնով բռնկած,
բիւր ամպերի
ու անհունի
բագիններն է հովերգում զմայլացած :

Ու զանգակներ – Աշտարակից Վաղարշապատ –
կախարդական ալօրներով, դառնավարամ
ծայնախադով,
ուսկերեան, խորհրդաբեր՝
ասում են նոր պատարագներ
ու սփուռում են երկինքներում,
Արարատեան դաշտից քաղած՝
իմաստացած տրտմութիւններ,
ցաւի ծայներ :

Հըրազդանի օծապոյնտ կարկաներում
կաղամախներ՝ սարսռուագին սօսաւիւնով, իրենց
թորած
արծաթաշիթ արցունքներն են օրօրում
ու գողդողուն փայլվումով.
զանգակների զողանջի հետ սրսրիում, սրսրիում...
Մինչ լեռները Գեղամայ,
Հայաստանեայց հսկայ Պարը
ու լերկ սարը Շամիրայ՝
Սրագածի շրթունքներից
բոց եմ խմում դեղնապղինձ
ու հագնումէ մարած թա՛զը գիշերուայ :

Հեռուռում, հեռուռում,
մի խուլ վանքում՝ վեղարակիր վարդապետներ՝
հոգիների թաղմանական զանգիւններով՝
մըրմունջ, տրտունջ
Նորեկացւոյ խօսքերի շուրջ .
մո՛մ են վառում
ու արեւի մեռնող լոյսի հետ միասին,
շա՛տ տիպազին
սաղմոսներ են հեծեծում :

Հոիսիսիմէի զմբէթի վրայ՝
ա՛սող է վառուում:

ԱՍԱՑՈՒԱԾ

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՄԵԼԱՄԱԴՅՈՏ
ԳԱՇՏԻ ՀԱՄԱՐ

Երբ մելամադ անապատում հով է փշում
դառնաթախիծ՝

միայնացած մի կաղամախ
ա՛խ է քաշում ծայնով պղինձ,
ու սողոսկուն կանանչ օծեր
մի տրումաքեր
կանչ են սուլում, եւ չորացած կմախքներում՝
զուգաւորում...

Այս դաշտը սեւ ու ահաւոր, իր բուերի
բաց բոյներով,

իր կաղկանձող չոր բոյսերով,
իր թաքթաքուր արխանզներով,
վըհուկներով բանդագուշուած՝
գարշ արգանդ է ու թառամած
մի լոռութիւն —
կախուած մարդու ահեղ ու սեւ մի լոռութիւն:

Յաճախ այստեղ գալ է անցնում
ու վեհերոտ, քաղցով վառուած իր աչքերով
նայում, նայում, մէկը վրնտում
եւ հեծկլտող ըստուերների հետ միասին
մի յուսահատ ողբ է ունում
ու բոլոքում անապատին :

Այստեղ ո՞վ է թեւեր փրռել
խեղդուած, սպաննուած թռչոնների.
այստեղ ո՞վ է սրբտեր կըրծել
դժովսքից փախած աղջիկների.
ու լարտուն շրթունքներով,
կռուն, երկայն մազիկներով
ո՞վ է խմել, ո՞վ է քանդել
աչքերը զինջ աստուածների :

Մի օր յանկարծ զմրութ Դուշը հեքեաթների
եկաւ, թառեց ու քարացաւ:
Հովը անցաւ.
հնձեց կամաց, ճեղքից կուրծքը անապատի.
«թող լինի մա'հ, թող լինի մա'հ»
պոռաց մի ծայն՝
երրայական աստուածաշունչ շանթող շունչով:

Ու նոյն ժամին հսկայ մի ստուեր, բոց թեւերով
վազեց, սահեց սարսավահար
քարից ի քար,
ու վայր ընկաւ .—
մեռա՛ւ :

Սարտարապա՛տ՝
դուլուլ ծայնող, թափուր, թափուր խռւլ
անապատ :

ԱՍԱՑՈՒԱԾ

ՄԵՌԵՆՈԳ, Վ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.

Հա՛յր մեր
մղծաւանց տարածութեանց եւ կանթելուած
անհունների .

Հա՛յր մեր սովի .
հրեշտակների գեղագանգուր —
տխո՛ւր, տխո՛ւր —
զիշերանց մէջ դիակների մօտ աղօթող
աղօթքներով սարտասող :

Հա՛յր մեր
պատռած սրտի .
խարոյկի շուրջ վշտով պարող սատանաների .
վիրաւորուած աղաւնիների,
դանակի տակ թարթափող խեղճ հաւերի —

սառ աչքերում վանականի
վերջին աստղի դու վա՛յլ եղիր,
եւ եղիր լոյս փայլակնայոյս :

Վերջին աստղի համբո՞յր եղիր: Հանդում ծւծուող
փետուրները թափթթվիող
հարամիկ
եղիր .

հանդում հարհանդ՝ շուրջառ արեւաքանդ
եւ պատարաց՝
ասուած ձայնով հանդարտ
եղիր :

Պատերի վրայ խոնաւ խուցի
շուրիր անցան մողէզների
ու մի կարիճ կանգ է առել
բարձի վրայ, ինչպէս խոնարհ մի սադաէլ
տե՛նդն է խմում վանականի :

Մի աբեղայ մոմ է վառում նրա աչքերում
ու սաղմոսի կրակ բառերով, .
հեծկլսոցով
խոնկ է ծխում
տխուր ու լուրջ
պատմութեան շուրջ
ծեծուած, մնաւծ, եբբայացի խոնց Յիոռուսի՝
որ փեսայ էր գեղ եւ մրունց :
Ու բոցավառ, փունց-փունց ենող հոյլ ծաղիկներ —
հին յայտնութեան նոր տեսիլքներ —
բարձրանում են՝ անքական սլանցքներով,
խեղճուկ խուցը հրկիզելով:

Նիհար մի շուն, շեմին առջեւ
ձամուծ է լուռ՝ ծիծեռնակի մեռած մի թեւ:

Վանականի աղիքները
դժոխքների հրդեհներում պյուեցան.
Նա բացում է ջերմոտ, հիւանդ շբթունքները
ու դունդունող շարականի
լալաթրթիռ հառաչի հետ՝
հետը ահի, հետը բոցի —
ու դունդունող շարականի
կողկողազին լացերի հետ՝
փորձում խօսքը իր հաւատքի . . .

Հազիւ տրոխող իր սրտի մէջ
ընկըմում են զօղանչները անդքնդաշէջ . . .
մինչ նա կանգնած՝ սեղանի մօտ շատ լուսաւոր,
ինչպէս վսեմ պիտ հոգեւոր,
պայծառափակ եպիսկոպոս,
սըփուում է խօսք եւ բոյր նարդոս . . .

Հրեշտակներ են ճախրում, անցնում . . .
ծնծղաների ծայն է լսուում . . .
բայց լուսաւոր սեղանի մօտ՝
ինչո՞ւ շունը հիւանդ, բռսոտ,
լաց է լալիս, — հաչում, հաչում . . .

Հա՛յր մեր՝ քոսոտ շունին,
ծիծեռնակի մեռած թեւին,
այս խեղճ ու հէք վանականին
զահիք զահեր անհունածին

եւ ա՛ռ սիրոք, բալան բալան այրուող, հեծող,
զիշերացած, խոնաւ խուցում մոնջ հառաչող
օրհասական վանականի սի՛րաք խոնարի,
խօլակրազ վանականի սի՛րտը պատառ —
ա՛ռ,
Հայր մեր՝

հովերեր սուրող հոգիների,
շեմի մօտ՝ վեհերոտ ու քոսոտ,
պաղասող շուների :

ԱՍԱՑՈՒԱԾ

ՍՊԻՇՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏ

Խուլ գիշերուայ աչքերի մէջ միսըրճուած
ստուեներ սառած — սառա՛ծ, սառա՛ծ —
պլըռուած ծոցին այդ բարախուն անդորրի,
սեւ, կըռածագ ճապուներով
կուրծքն են փորում մութերի
ու հառաջում ու սպասում են սարսափած:

Մի ոտնածայն... հեռւում սողսող,
թաքնաթաքուր ոգիների մի խումբ դողդող,
փսիքսալով՝ վարկեանների թեւն են փեթթում
ու բոպէի սիրտը ծամում:

Մի ոտնածտյն...

Ու բոպէի սիրտը ծամում:

Նիհար, երկայն, սուր մատերով
երկինքներն են ցուցանում
ու հձըռում, մէկը միւսին, բուի ծայնով:—
խրպուն ու խուլ աղաղակով:

Մի ոտնածայն...

Թաքնուելով, բաքուելով սառ պատերին.
կէսգիշերին, —
(—ցիր ցանդ ծամեր,
զորսի ուռած ու մնծ աչքեր) —
անյայտ մի շուք, կարճ ոտքերով,
եկաւ՝ համբ, մնտաքս բայլով,
ու պատի տակ
աւերակ,
եղաւ ճիղչի թեւ կարկամած :

Մի ոտնածայն... մարդ է անցնում,
անհոգ տուն է վերադառնում.
մուածում է. «Ճերմակ զինին...
Խայմի խոր սազերգումը... իմ սիրածին
ասի կամաց խօսքը վերջին... զինին, զինին»...
ու քայլում է մարդը արագ,
զանդ-զանդ
քարերի հետ լուռթիւնը օրօրում,
ու երազում, երգում վանկ-վանկ...

Պատի տակից, ճիղը յանկարծ —
ինքան արա՛գ, ինքան արա՛գ —
առաջացաւ
ու քաղաքում, գիշերանց մէջ,
մի լոյս փայլեց —
դաշո՛յն...

Ժամը ընկաւ. աղաղակի հետ թաւալեց.
արիւնախառն ու անընկեց
ուկոր ճռնթեց:

Ժամը լնկա՛ւ . մարդը նորից աղաղակեց . —
ու ամէն ինչ լուռ քաղաքում
լուց:

Մօտը նստած . հսկայ մի բու ,
քստմնելի մի զինարբու ,
խողուրտիւնով՝ մնուած մարդու աչքն է խմում

ու ստուերները արիւնու
ասում են .
Ե՞րբ պիտի գայ առաւօտ . . .

ԱՍԱՑՈՒԱԾ

ՅՈՒՎՈՒՄ ԽԵԶԴՅՈՒԹՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տրիտոնների փրփուր կանը առ անդունդ՝ կո-
հակների շառաջները փշրեցին :

Ու ընդծովեայ կանանչի մէջ անալլայլ — հե-
ղուկ դաշտում , սառ եւ մթին —
ու ընդծովեայ կանանչի մէջ անալլայլ :

Աիրենների դողդոջ դալլայլ :

Սիրենների դողդոջ դալլայլ . . . Փախչենք ,
քոյրիկ , ասեց ալիք ալիքին . . .

Մինչ խեղդուողի աչքերում՝ կոլոր-կոլոր , լուս-
նաշող փայլ :

Քամիների աղաղակը մտրակող՝ մահու հե-
ծող պղինձէ փող՝
պղինձէ փող սիրտ պատուող :

Փախչենք , քոյրիկ , ասեց ալիք ալիքին . . . Կայ-
մեր ճալթած ալս օդի մէջ հրդեհացած .

մըրկահար լա՛ց է ու սո՞ւզ փոթորկասպար . . .
Մինչ անդընդում՝ լո՛յալ փայլփայլ , ե՛րգը
հմայիչ , սիրենների անալլայլ :

Անցնող բոցեր տօպագէօն : Մի բարկացած
սեւ տրիտօն : Եւ բախտաւոր հիր ժպիտ՝ ծոր-
ուած ջուրում՝ շիթ առ շիթ :

Եւ անտառում ընդժովիայ .խորայործան ջու-
րերի մի սառ ոգի :

Վըսնչում է խըսնջիւնով,
զարնում մութը՝ շաչող իր թեւերով :

Մի բախտաւոր , հիր ժպիտ , ու լոյսեր
նոր՝ ծով դագալում անդորր , անդորր.
ու մի վին —

Կոհակ գրկեց մի կոհակին —
ու մի վին

ըդծանուշի երգ է հեծում , թեւեր փոռում ապա-
կիացած աչքերի մէջ բախտաւորի —
պատմում ծիծղուն պատմութիւնը ալիքների :

Ափում , մարդիկ սպառում են սարսափած՝
դիակը ուռած :

ԱՍԱՑՈՒԱԾ

ԹՐԱՆԱՌՈՅ ԳԻՒՆԵԽՈՍԽ ՀԱՄԱՅՆ

Ա.վիլս մշշէն՝ սուտակացած , եռ արիւնը նո-
խազների լմպեցի

Եւ արիւնուշտ շրթունքներով , իմ խօլ սրտիս
տենը զինով՝ երգեցի .

Ո՛ Դիոնիսոս , ո՛ Դիոնիսոս , Թրակիոյ ալբը-
շիու սի՛րտը առիր եւ ուղեղը խայտեցիր :

Անդինկաց կանթեղներով դու վառեցիր հոգի-
ների մութը խոնարհ ,

Եւ դաշտ եւ սար —

ո՛ Դիոնիսոս , ո՛ Դիոնիսոս , սոսկավիթխար
զահակիր :

Ու այս գիշեր լեռներում՝ անտառների խար-
շափներով սարսունի

ու խենդութեան նուազներով հարքեցած ու
զոհերի արիւններով մշտահիր

մտրակուած, կախարդուած, խօլացած —

բանդագուշեալ պատարազի կաքաներով ըզ-
մալացած —

ինչպէս ես .

պարմանուեիք, ըմբոստ կանար, շրթունքնե-
րով ջերմադով

հեւքը քո մնծ սեւ աչքերիդ խմեցին եւ կուրծ-
քերնին պատուեցին :

Եւ լեռնէ լեռ եւ ժայռէ ժայռ կատաղօրէն
վազեցին, յաւերժութեան վառ ծոցի մէջ նե-
տելով

փա՛յը տարփուն ջաների, կրա՛կը ուռած սրր-
տերի, տե՛նդը ծլող արգանդի :

Եւ լեռնէ լեռ եւ ժայռէ ժայռ կատաղօրէն
վազեցին

ծնծղաները զարնելով յոյզերի. ու տենդա-
ցնոր ու տեսլահա՛ր, համբոյրներով անմխիթար

նոխազների մարմինները պատուեցին :

Ահա կանգնած ուրոների շարքերում, աղիք-
ների օձապտոյտ ծալքերում
բաղդիս հիւսքը կարդացի .

ու նոխազի սառած աչքը թափեցի, ու նո-
խազի տաքուկ սիրող խածնեցի :

Արծիները զայրացած՝ դէպի անդունդ սուզ-
ուեցան .

եւ կատաշած, խեղդուկ ծայնով առիւծները
պուացին,

կանանց շուրջը պար բոնեցին, ոսկէ թեւեր
շարժելով —

պար բոնեցին՝ տեսնելով
այս սոսկալի, այս հոգեզմայլ, ուրուատեսիլ,
բոցածաւալ

ժամը ահեղ, սիրաթաւալ,
մեռելների ծիծաղներով, աստուածների տար-
փանքներով
հրդեհուած :

Անտառներում նոխազուներ զուգուեցին,
մինչ աղջիկներ կուսութիւնը զոհեցին
մրրիկներին .

որ ջահերի բոց սերմերով անդունդները յու-
ղեցին :

Ու ես, ու ես, թրակիոյ շոխնդ աշխարհում,
համայնատրուի բնութեան հետ միասին

եղայ թեւըդ, ո՛ Դիոնիսոս, ո՛ Դիոնչսոս, եղայ
թեւըդ սարսուազին, ու բոցակէզ տիեզերքի բամբ
շունչի հետ

եղայ սուրող, զոհարերող քրմապետ :

ԱՍԱՑՈՒԱԾ

ԿԱԽԱԳԱՆ ՌԱԹԶՐՄՅՈՒ ՀԱՄԱՐ

Մի հրեշտակ թեւն է կոտրել քաղաքում:

Ու վայր է ընկել մի հրեշտակ,
քաղաքում
ուր զանդ-զանգ, սարսափավանկ
մի մահազանգ
սղոց է շարժում
ուղեղներում:

Աղամամութին . . .
Սպիտակ աչքերով տեսիլք է եկել ու սիրտն է
լոյսերով պայծառ .
եւ մի ծառ
ծաղկել է, ծաղկել . . .

ԵԼ, տղաս . . . ԵԼ:

Սպիտակ աչքերով տեսիլք է եկել
ու թել-թել
սանդուղ է հիւսել՝
որպէս զի փախչի,
երժայ ու հանգչի . . .

ԵԼ, տղաս . . . ԵԼ:

Աղամամութին . . . անշարժ ծունկերին
պողպատ են թորել ու կապար զլսին:
Մի ծառ էր ծաղկել, ծղրիթն էր երգում . . .
Աղամամութին . . . ձրբոցը դրան —
մարդիկ, քահանան
եկան:
Թմբուկներ զարկին:

ԵԼ, տղաս . . . ԵԼ:

ԱՌ խօսքս դողուն . . . շրթերոյ սեղմիր —
երա՞զ է կարմիր . . .
Բոնի՞ր թեւիցը, սպիտակ աչքերով,
ուկելված հարսի
ու հպարտ անցիր :

Աղամամութին թմբուկներ զարկին
ու տօն տօնեցին
մեծ հրապարակում:

Մի մարդ են կախում:

Արդեօք չն տեսնում . . . Քերովքէները մոմեր են

հեռու
ու լոյս աշխարհում .
սատափ կոյսերը ճպոտ են զարնում հովերի մար-
մանդ

թելերի վերայ . . .

Մի՛ դողար , տղայ . . .
 մոմած են թոկը . փշրած խաչի տակ
 աչքերդ յստակ
 յամա՛ռ թող նայեն :
 Երբ սիրտդ հանեն —
 տա՞ն .
 տանեմ տամ քո մօր
 վշտին ահաւոր :

Ծղրիթը երգեց ծառի վրայ ծաղկած .
 մարդիկի աչքից արիւն է կաթած :

Երբ սիրտդ հանեն —
 տա՞ն .
 տանեմ տամ քո մօր
 վշտին ահաւոր :

Դէ՛ , հիմայ , հիմայ ,
 բարձրացիր տղաս :
 Դժբա՛խտ իմ տղաս . դժբա՛խտ իմ տղաս :

Այսօր քաղաքում ,
 մեծ հրապարակում ,
 մարդիկ հրեշտակի —
 կում - կում
 արիւն են խմում :

Ծղրիթը լւեց . . . միայն քահանան
 վեց աղօթք ասեց
 մեքնաբար :

ԱՍԱՑՈՒԱԾ

ՅՈՅՈՒՍՈ ԵՒ ԿԱՊՈՅՏ ԵՐՍՅԱԲՈ ՀԱ . Ա. Յ.

Ասում եմ ինձ ,
 պէտք է յուսալ , պէտք է լինել աստուածների
 թեւերի պէս մնուաքսածալ
 ու դարիդուս ու դարիվար
 ծաղկափթիթ ճահաններում արեւների՝
 խօլ պար դառնալ :

Ու դարիդուս ու դարիվար ,
 ճախրե՛լ , թեւե՛լ
 եւ յոյսի մեծ տաղերգերով զահել աշխարհ :
 Պէտք է լինել մեղու հարբած ու այսակիր՝
 որ աստղերի սրտիցը իմը .
 մեղը է հանում ու ամբարում
 ամարասուն ծաղկների բաժակներուն :

Ասում եմ ինձ .
 պէտք է յուսալ
 նորաբողբոջ կանանչի պէս դաշտերի
 պէտք է լինել .
 ու զերմաջերմ ու կենեղուտ ,
 զարդինանազարդ վարդի նման արեւաթագ պէտք
 է լինել :

Եւ տա՛լ եւ տա՛լ ամէն ինչին —
եղեռնաշամբ եղտիւրներին,
խարշափաշող անտառներին,
լուսացնցուղ ծաղիկներին,
սարին, դաշտին, տիեզերքին —
տա՛լ, տա՛լ,
կոհակ-կոհակ, սրտիս յոյզը սիրաթաւալ :

Ասել, ասել,
ա՛ռ կանթեղը, ա՛ռ կանթեղը իմ հոգիիս,
ո՞ մարդ
եւ եղիք զուարթ ու տչքերով երազազարդ.
ասել, ասել
ու իր հոգին պատառ պատառ բաժանել :

Ժամը պայծա՛ռ պէտք է լինի
ու երազը պէտք է լինի կենդանի —
ոսկեճաճանչ ամպհովանի յոգնած գլխիս,
եմիկերոն իմ ուսերիս :

Ասում եմ ինձ.
լինի երա՛զ ընդմիշտ տեւող —
սուտակավառ, ակնապարար, եղերգական, կա-
խարդական,
աչքեր ծովծվան ու հեզանազ,
վարսեր կապոյտ,
խօլապոյտ —
լինի երա՛զ :

Սափորի մէջ երկնանուէր,
կայլակ, կայլակ,
մեղմանուագ
շե՛շոը նետել երգերիս
ու աչքերիս փա՛ցը լուսեղ
ու սէրերիս ցա՛ւը կանթեղ —
սափորի մէջ երկնանուէր :

Եւ ապագան բազմաերազ՝
սրտիս զարկով տաւղահարել,
յոյսիս ճրագով բոցակիզել
եւ լոյսերով ոսկեճաճանդ՝
դարձը անթիւ աշխարհների
դարձնել հրաշէն մի աղամանդ
խորքում վշտոտ հոգիների :

Ասում եմ ինձ.
պէտք է յուսալ,
պէտք է լինել աստուածների թեւերի պէս մե-
տաքսածալ :

ԱՍԱՑՈՒԱԾ

ՄՆԱ.Թ ԲԱ.Խ.Ս.ՍՏԵԴ.ՇԻ ՀԱ.ՄԱՐ

Ահա այստեղ, շիրիմի մօտ բանաստեղծի՝
պսակը դրինք մեր տրումութեան, մեզ յոյզերի՝
հիւսուած բիւրեղ արցունիներով

Խումբը
արշալոյսի .

հիւսուած լոիկ հառաջներով

Խումբը :

գիշերների :

Ահա այստեղ
եղանք ինչպէս վընիտ կանթեղ՝
իջած սրավար յիշումներից ,

Խումբը :

իջած փարիխառ փարոսներից :

Նրա երգերից մննք բաղեցինք,

Խումբը
բերինք . բերինք —

սարսուռը լուռ վառ աստղերի,
թառանչը մունջ անջրպետի —

Խումբը
հանդում մեռնող՝ ծայնը սոլուն
լեռից իջած աստուածների ,

ու հեռաւոր կոչնակների կանչը տխուր,
մելամաղձոտ երեկոյիան օդում մարտր :

Պատառ հողին պլուած, պառկած .

Խումբը
մեռած, մեռած —

Բանաստեղծի աչքերի մէջ՝
լոյսեր անշէջ
զանգակեցին ինչպէս արեւ
ու բոցանուտ աշխարհների եղան մի թեւ —

Խումբը
հրաշք ու պարզեւ, պարզեւ, պարզեւ —

ուր տխրախօսք սիրոյ մի վին .

Խումբը

ուր սրբնաները արշալոյսի կրակնածին,

ուր ծառերի շարժուող բոցը կանանչաթռւր
մարդեր՝, մարդեր —

Խումբը :

մարդեր՝, մարդեր —

եղան վեհ սէ՛ր,
եղան հրաշո՛րթ ծեզ սի հրաւէր :

Նա մեզ տուաւ,
գարնան լուսեղ շրթունքներից ըմպած զինին .

Խումբը

Նա մեզ տուաւ
աշնան տրտում օրօրներից թափած ոսկին.
Նա մեզ տուաւ
իրիկնամուտ զօղանջների հե՛ծքը տիսուր .

Նա մեզ տուաւ
վաղաթարշամ ծաղիկների ո՛ղբը խամուր —
իսկ դուք նըրան, դուք ի՞նչ տուիք ,

Խումբը

անօթութիւն եւ նախատինք, աւա՛զ, աւա՛զ . . .

Յիշե՛նք երգը . . .

Խումբը

Յիշե՛նք, յիշե՛նք, յիշե՛նք, յիշե՛նք . . .

Ճզմած նըռան հիւլժ էր համեղ,
երկինքների քօ՛դ էր արծաթ :

Խումբը

Զին էր ծաղիկ՝ շրջնի լուսեղ
կամ ցողերի խա՛զ էր ազաթ . . .

Յիշե՛նք երգը . . .

Խումբը

յիշե՛նք, յիշե՛նք, յիշե՛նք, յիշե՛նք . . .

Յորեանների մէջը թրթուող ժամը պայծառ .

Խումբը

փողուկը փողուկ ա՛ստղը հիսովառ,
ողբը սրտի՝

որ հովի պէս թուփերի մէջ մրտենիի

Խումբը

հեծեց, կանչեց, շաչեց, վառուեց . . .

Ու երգը մունջ,
մեղմատրտունջ,
ասուած կամաց,
ինչպէս քաղցր ու գեղ մի լաց,
ինչպէս վրճիս ու լայն բիբեր՝
որ տեսմում են անդրերկրեայ լոյս հոգիներ,

Խումբը
հեծող, կանչող, շաչող, վառուող :

Յիշենք եղանք —

Խումբը
յիշենք, յիշենք, յիշենք, յիշենք . . .

Եոր ծովերի գոչիւն մնչող —

Խումբը
ճաթող, ճայթրող բոմբիւն, շառաչ . . .

անդունդների թաւալ հառաջ,
կայծակնահար իջնող մի կանչ,
շեփորների ծայն հիասքանչ,
անհունների հրարան երկրում՝
ուր ոգիներ խօլապտոյս երգ են դարձնում —

Խումբը
աս'ի վերայ մեր սրտերի, մեր սրտերի, մեր սրտերի:

Ով երգ չունի՛ պիտի մեռնի՛ :

Պիտի ապրի
այն որ հնարեց մեզ ոսկեվարս մի առասպել
ու թափառող երկինքներում կրցաւ ժողվել
շե՛շոր խորհուրդ ու լուսաշող նոր հունծքերի,
ծայնը ճաթող սերմերի :

Պատառ հողի տակը պառկած —

Խումբը
մեռած, մեռած —

մեռած, մեռած
բանաստեղծը մի աշխա'րհ է կենդանի:

Խումբը
Մի աշխա'րհ է կենդանի .
որ խորհուրդից երկինքների
ու խորքերից հոգիների
թեւեր առաւ ու բարձրացաւ —

աստուածացաւ, աստուածացաւ —

Խումբը
աստուածացաւ, աստուածացաւ :

Աղջիկները

Թռչունները օրօր օղից զոյ ծըծեցին .
թռչոտելով թրթրոեցին՝
վարդամատն արևն ելքին դալայլեցին :

Թեւերս վառ՝ կարկառեցի մարմարին արշալոյսին,
արշալոյսին տօպագէօն ,
որ ինձ փաթթեց իր տենդազին
հմայքներով ,
պայծառափայլ պատմուճանով :

(Ճիճ աղջիկները պարուժ են)

Դեղձանամազ կոյսեր հրատապ ,
դանդաշումով ոսկիաթափ ,
դաշխուրանի եւ սափորի մէջ հրդեհի՝
ընբոցիկ ծաղիկների
լալ սրտերը նետեցին :

Աղջիկները

Դաշխուրանի եւ սափորի մէջ հրդեհի —
լուսաբուլբոզ որպէս շուշան ,
հրավառ հիսորով հնարած ըէհան —
դաշխուրանի ու սափորի մէջ հրդեհի
լուռ գիշերանց խորհուրդները վառեցինք
ու պարեցինք ,
ու պարեցինք դանդաշումով ,
ծափ հարելով
ցընծան պարեր ,
ծաղկաերեր :

ԱՍԱՑՈՒԱԾ

ԱՅՆԱՌՈՅՄԻ ՄՐԵԳԵՆԵՐԻ ՀՈԱՄԱՅ

Հորիզոնը պատմուճանով կրակնաթափ
հեռում ծալք-ծալք բնինց մաղեց ,
բուռ-բուռ սատափ ,
ու ամպերում քաղեց փողփող —
եղաւ ինչպէս հազար թևեր սուտակածով :

Վերջին աստղը անհետացաւ .
սարի ծոցում լուսաճանչ վերջին աստղը
մեռաւ , մեռաւ ,

ու նոր այզի ծաղկածրտուն , վառ փեխտակից ,
մեղուների արփիածին երամները ճախրեցին՝
հորիզոնում վարդաբոլոր
ցողե՛ր , ցողե՛ր արեւաթոր ,
ըմպեցին :

Խումբը

Ակօսներում արին վազեց ,
եւ հեշտաբոյք հովիաներում հու՛ր թիթեռեց .
բոցե՛ր անցան
մեղմատատան :

Մեղմաշրջան, յոյլ սլանցքով
ու դարձիդարձ ոլորումով՝
խունկ նետելով բլուրների կանանցներին
և բալասան՝ մեծ լիոների վառ ծիւներին,
պար պարեցին.
կարափնատի վարդարիւն ցօ'դ մաղեցին՝
սարին, դաշտին, ծաղկին ծալծափ,
և գոյներին ծիլն ու ծլան
գարնանաշարժ ծովում ծաղկած
երկնատարած՝
որ փայլում էր փարփառ փայլով ծիւնատեսիլ՝
փայլատակում ցոլըով հրեղէն,
յեղազեղուն ու լուսեղէն. —
ու պարեցին, ու պարեցին . . .

Հովուափողի երգը ծնուեց . . .

Աղջիկները

Թափ-թափ, շիթ-շիթ, հեւ-հեւ,
թիթեռաթեւ.
սրինգների թաքնաթաքուր նոր հնչիւններ,
ճառագայթուն, լուսակարկաչ ելէւէջներ,
ասես աչքեր լայն-լայն բացուած դէպի երազ
կամ հիր աւազ
հատ-հատ մաղուած
երկնաքներում պղինձացած :

Խումբը

Թափ-թափ, շիթ-շիթ, հեւ-հեւ,
հողմադեղեւ,
լոյսերը նոր .
արեւաթոր
հորիզոնի գարդ կուրծքի վրայ
հմայք են ածում՝ կախարդաբնը շափին դայ:

Ումենը

Թափ-թափ, շիթ-շիթ, հեւ-հեւ,
արեւ, արեւ . . .
Սլէլուիա, ալէլուիա, . . . ուիա', . . . ուիա' . . .

Երկնաքների խորանի վրայ լուսականթեղ
երգեր ելլան արեւայեղ,
եւ ծնծղաներ՝
սովածփուն ճալթած ծայներ,
շարականի հետ միասին
ամպերի մէջ խարոյկուեցին :

. . . Ուիա' . . . ուիա' . . .
ալե՛լուիա, ալե՛լուիա . . .

Խումբը

Ահա սրինգներ՝
գլուխանաղ, արծաթասահ հառաջանքով,
ծայն են ծայնում կախարդ թորող շրթունքներով,
ու թեւածում, կամաց ասում —

Աղջիկները

«Աղջիկ մունջիկ . ո՞ նազելի
բոյր հովերի —
անհունածին . ծիծաղավառ պարմանուհի ,
սիրեմ , սիրեմ , բոյր բոյր համբոյր
նորահրապոյր ,
տա՞մ , տա՞մ , շրթունքներիդ քո վարդաթոյր —
տա՞մ , տա՞մ ,
ու պարտէզում ծփուն կուրծքիդ
քաղեմ համբոյր :
Սիրեմ , սիրեմ . . .

Ահա սրինգներ՝ ճառագայթներ :
Ահա ուրիշ , հոսուն . սողուն արեւաբեր ,
խորհուրդ ձայներ
սրսըփում են պատարագում խնկանուէր՝
ոսկի կանչեր , կահկահ , ծիծդուն ,
թեթեւ . սահուն ,
թեւաբոլոր կոյսապարեր
ահա . ուրիշ ճառագայթներ՝
ապակիէ թաւ զանգակներ :

Խումբը

Դլին-դլին . դլին-դլին ,
ծայներ ելլան անծայրածին ,
թռչկոտելով , ոստոստելով
խաղ խաղալով . բարեւ տալով
շուրջը ծլուն ծաղիկներին .
զովեղ , հասեղ , նոր խոտերին —
դլին-դլին . դլին-դլին ,
ճառագայթներ՝
ապակիէ թաւ զանգակներ :

Աղջիկները

Ու դաշտերը , պարտէզները ակամնց դրին ,
ակլէզ-ակլէզ թիթեռնիկներ ու հեզ ճանձեր
վեր նայեցան , զմայլեցան ու սուբեցին՝
փերթէ ի փերթ , բոյսէ ի բոյս , վարդէ ի վարդ
ծառէ ի ծառ բողբոշազարդ :

Թեւերս վառ՝ կարկառեցի
հորիզոնի մեծադղորդ
մրճազարկին հրդեհայորդ ,
որ բոցերի ծաղիկներից .
որ լոյսերի ոսկիներից ,
պատկ են դարբնում ակնապարար
եւ խմբերգում մեծափարիառ :

Թեւերս վառ՝ կարկառեցի
ու երգեցի .
ալէլուիա՝ ալէլուիա . . .

Խումբը

Սրսըփում են սրինգները սիրածորան ,
թեւածածան ,

ալէլուիա՝ ալէլուիա՝
. . . ուիա՝ . . . ուիա՝ . . .

Աղջիկները

Հուր են թորում զողանջները զանգակների .
կրակ են եփում խարոյկները դարբինների . . .

ՑԱՆԿ

Ալէլուիա՝ ալէլուիա՝ —
եռից իջան գիւղացիներ,
կուսազարդուած թագաւորներ
ու շարժեցին հազար փայլով գերանդիներ :

Ամենը

Ու լեռից լեռ՝ բարձրաթռիչ փողածայնով.
ու դաշտից դաշտ՝ հետալալիւն ջութակներով.
ու ձորից ձոր՝ լալաթրթիռ սազերգումով,
ու ծովից ծով՝ ալիքաբեր ունումներով —
Հիմալայից դէպ՝ Արարատ, մեծ Կազբէկից
դէպ՝ Մահարա,

Ովկիանոսից՝ Նիազարա —
ալէլուի՛ա, ալէլուի՛ա, . . . ուի՛ա, . . . ուի՛ա,
համայն սիրոյ պատգամները խնկաբուրփառ՝
ամէն մի տեղ ձայն են ձայնում աշխարհավառ։

Ու կրակի մէջ արեւափառ
կամա՞ց, կամա՞ց մազցում է օրը պայծառ։



Երգ	3
Երեկոյ	5
Աչքեր կան	7
Առաւտա	9
Խոկում	10
Կեանքիս Փարզը	12
Խոհերս այսօր...	14
Աղբիւրը	15
Պարուհուն	17
Ժամերի բայլը	18
Տրտմութիւն	20
Վերացում	22
Միայնութիւն	24
Մարդիկ բաղարում	26
Ազօթք	28
Երկաթ սիրտը ժամացոյցի	30
Հոգիս մազնիսացած ծիւսիս է մազցում...	32
Վայրկեան	33
Կոյր օրիորդը	35
Սուզ	37
Եսսե Հոմո	40
Զմեռ	42
Տօթ շունչը ծովի	44
Մանկանկարներ	47
Պանդուխտ	50
Մայր Եկեղեցին	52
Մեր Հայրենիքը	53

ՏԵՍԻԼՆԵՐԻ ՕՐԻՈՐԴԸ

1 Այսօր տեսայ օրիորդն իմ	57
2 Օ վառ երազ	58
3 Վերացումով դեղեւուն եւ հոգեստանց	59
4 Կէս զիշեր է	60
5 Աստղս հեռաւոր	61
6 Տեսէ՛ք, տեսէ՛ք	62
7 Ժամն է այս լիշտումների	63

8 Պարտէոիս մէջ	64
9 Մըրիկ եւ հուր	65
10 Սրտերի հեզ ճրագ	65
Աղջիկ ծով աչքերով	67
Կոյսեր	70
Ճրաւէր	72
Դաշնամուր	74

ՕՐԵՐԻ ՊՍԱԿԸ

1 Առաւօտ	79
2 Քեզ հետ մի սսին	81
3 Լիճի ափում	83
4 Պատարագ	85
5 Կէս օր	86
6 Եւ երգեցի	88
7 Ահաւասիկ	89
8 Բայց առ այժմ իմանանք	91
9 Պատկեր	93
10 Երեկոյ	94

ԼՈՒՍՆԱՅԻՆ

1 Ուկեփետուր լոյս է սահում	99
2 Խօսալյութիւն	101
3 Համերգ	103
4 Մ'ի մեներգ	105
5 Սոխակը	107
6 Հրաւէր	109
7 Սինանախիս, Սինանախիս	111
8 Ճառագայթը	113

ԻՏԱԼԻԱՅԻՆ

Իտալիային	117
Վենետիկ	119
Ֆիորէնցա	122
Հոնդ	124

Պիզա	125
Պիետա	126
Գիշեր Ֆիորէնցայի դաշտում	129
Դանուէ	131
1 Villa Böcklin	133
2 Ջերմանոցում	134
3 Վիլլա Բէօլիին, քո նոճիներ	135
4 Պարտիզանը	136
5 «Մհաելների Կղզին» լրած	137
6 Սիւնի վրայ մի կիսարձան	138
7 Գոմզէական սեւ սրանում	139
8 Ամէն զիշեր տասներեքին	140
9 Զոնիշ, տպաս	142
Յոյս	143
Օդու է տմոյն	144
Երգ	146
Որոնում	149

ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

Ասացուած Արարատեան գաշտի համար	153
» Արտարապատի մենամաղձուռ գաշտի համար	156
» Մեննոդ վանականի համար	159
» Մպանոտ ածի համար	162
» Ծովում խեղդուողների համար	165
» Թրակիոյ Գեռնիսիոսի համար	167
» Կախաղան բարձրացողի համար	170
» Յոյսիս եւ կապոյտ երազիս համար	173
» Մեռած բանասուղդի համար	176
» Արշալոյիս սրինգների համար	182

ՎՐԻՊԱԿ

Էջ	Տառակ	Ախատ	Առկեդ
4	7	թոիչքըն	թոիչքը
4	14	անդունդում	անդընդում
7	13	խորհուրդում	խորհըրդում
9	6	արիւնաքաղ	արեւաքաղ
16	14	արիւնաքանդ	արեւաքանդ
23	9	հետանում	հեռանում
25	20	մենութիւն	միայնութիւն
28	2	ոպիտակ	ապիտակ
49	14	հերձւած	հերկւած
54	13	ծայնից	ծայնեց
58	14	խորհուրդափայլ	խորհըրդափայլ
64	3	խորհուրդաբեր	խորհըրդաբեր
83	21	ճախրող	ճախրող
84	1	փարփառ	փարփառ
87	5	այս	այս
89	10	անդունդածին	անդընդածին
91	16	են	են
104	9	էն	էր
127		Pieta	Pietà
128	7	հրատափ	հրատափ
132	16	տեսանադ	տեսանոդ
132	27	հիասկանչ	հիասքանչ
145	10	մեղաբեւ	մեղմաբեւ
154	23	աղօթներով	աղօթքներով
155	11	հազենում	հազնում են
159	21	եւ մրունց	անմիմունց
162	3	պլըտած	պլըտած
163	4	ցանդ	ցան
165	9	կոլոր-կոլոր	կըլոր-կըլոր
169	9	պուացին	պուացին
173	13	բաժակներում	բաժակներում



Հրատարակութիւն Տպագրութիւն
Մ. ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

ԳԻՆ 75 ՂԲՇ.

Կյ Արմ + 29/ԽՍՀՀ

ՀՀ Ազգային գրադարան



NL0333075

29183